⁴² Турция не присоединилась к документу.

⁴³ Турция не присоединилась к документу.

⁴⁴ Турция утвердила документ 10.10.1957 г.

⁴⁵ Турция утвердила документ 16.03.1983 г.

թյուն մահմեդական պրոգելիփիզմի (հավաքորսություն) համար, թուրքական խալամբարները ակրիվանում են՝ կառուցում են դպրոցներ, հովանավորում են մզկիթներ օրար երկրներում: Նշանակում է՝ քրիստոնեական առաքելական գործունեությունը Թուրքիայում «խախորում է ազգային միասնականությունը», և նոյնիսկ քրիստոնեական ժամերգությունը «խախորում է Թուրքիայի օրենքները»: Այդ համապերսպում անհրաժեշտ է կանխել արգելոցի փարածքում գրնվող պարմաճարպարապետական հուշարձանների՝ բնական գործունեությունը պայմանավորված ասդիճանաբար քայլայումը և բարելավել դրանց պահպանվածության վիճակը: Այս արժեքների ամրակայումը և վերականգնումը թույլ կփան ներդաշնակ պահպանել անցյալի մշակութային հուշարձաններն իրենց շրջակա արժեքավոր բնական միջավայրի հետ: Վրդի արագ զարգացող գրոսաշրջության պայմաններում այս հուշարձանների օգտագործումը նպագակ ունի նաև լուծելու փարածքում որոշակի զբաղվածության, ենթակառուցվածքների սպեղծման խնդիրներ:

Այդ համապերսպում անհրաժեշտ է կանխել արգելոցի փարածքում գրնվող պարմաճարպարապետական հուշարձանների՝ բնական գործունեությունը պայմանավորված ասդիճանաբար քայլայումը և բարելավել դրանց պահպանվածության վիճակը: Այս արժեքների ամրակայումը և վերականգնումը թույլ կփան ներդաշնակ պահպանել անցյալի մշակութային հուշարձաններն իրենց շրջակա արժեքավոր բնական միջավայրի հետ: Վրդի արագ զարգացող գրոսաշրջության պայմաններում այս հուշարձանների օգտագործումը նպագակ ունի նաև լուծելու փարածքում որոշակի զբաղվածության, ենթակառուցվածքների սպեղծման խնդիրներ:

Հուշարձանների առկա վթարային վիճակի վերացմամբ և արդյունավետ օգտագործմամբ սույն ծրագրի իրականացումը նպագակ է հետքապնդում՝⁴⁶

⁴⁶ Cultural and natural heritage, <http://www.allaboutturkey.com/heritage.htm>

- վերականգնելու արգելոցի դարաձքի պարմամշակութային հուշարձանները.
- կազմակերպելու հուշարձանների ճիշտ պահպանությունը՝ որպես մշակութային լանդշաֆք (բնական և մշակութային ժառանգության ներդաշնակ պահպանման համալիր մոդելում).
- նպաստելու հուշարձանների արժևորմանը ինչպես գեղի բնակչության, այնպես էլ միջազգային հանրության շրջանակում.
- ակդիվացնելու և նորովի կազմակերպելու հուշարձանի հիման վրա կրթա-դաստիարակչական ու կրթամշակութային գործընթացները. հուշարձանների օգտագործմամբ նպաստելու գրուսաշրջային ենթակառուցվածքների, գրուսաշրջության գործեր ձևերի զարգացմանը և գրուսաշրջային սեղոնի երկարածզմանը.
- սրեղծելու նոր գրադադարության ոլորտներ՝ գրաստային գուղիքմի (գրասպների միջոցով խմբերի գեղափոխումը հուշարձաններ կարող է գեղում զարկ գրալ հարկացին ձիաբութությանը, լրացուցիչ եկամուտի աղբյուրի վերածվել արգելոցին հարակից բնակավայրերում ապրող բնակչության համար և չվնասել բուսածածկը ճանապարհների կառուցման դեպքում), հուշանվերային արդադրության հետ կապված և նպաստելու շրջակա համայնքներում կենսամակարդակի բարձրացմանը.
- բարձրացնելու արգելոցում մշակութային ժառանգության հանդեպ հոգագործությունը և վերահսկողությունը:

Մշակութային և բնական ժառանգության պաշտպանության ըմբռնումը, որը բնակայված է Թուրքիայում, ունի հարուստ մշակութային ժառանգություն և բնական միջոցներ, սակայն պետքությունը այս հարցում չի առաջնորդվել Թուրքիայի սահմանադրական օրենքներով, պարբականություններով և լիազորություններով:

1982 թ Թուրքիայի Սահմանադրության 63-րդ հոդվածում ասվում է⁴⁷.

⁴⁷ 63rd. Article of 1982 Constitution, <http://www.constitution.org/cons/turkey/part2.htm>

- Կառավարությունը պետք է իրականացնի միջոցառումներ՝ աջակցելու և խրախուսելու մշակութային և բնական գույքի պաշտպանությունը:

Թուրքիայում մշակութային արժեքների պաշտպանության համար միջոցառումներ սկսվեցին կիրառվել դեռևս Օսմանյան կայսրության վերջին շրջանում, սական այդ պաշտպանությունը ավելի կայունացավ և կիրառելի դարձավ հասրկապես Թուրքիայի Հանրապետության հասրավում ժամանակ: Այս գործընթացում ընդունվում է Թուրքիայի Հանրապետության առաջին ընդհանուր պաշտպանության օրենսդրության պահպանման մասին թիվ 1710⁴⁸ 25/4/1973 ին Հնէագիրական ակտը:

Ավելի ուշ, 1983 թվականին, Մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին թիվ 2863⁴⁹ օրենքը դուրս է մնացել Թուրքիայի Սահմանադրությունից:

Բացի այդ, Սահմանադրության մեջ դեղ չի գրել Պարմության և մշակույթի անշարժ գույքի օգբագործման պահպանման ու երկարաձգման մասին թիվ 5366 ակտը:

Այսօր, Մշակութային և բնական ժառանգության պաշտպանության մասին 2863 օրենքը ուժի մեջ է, օրենքի մասին հարցը քննարկվել է դեռևս 1983 թվականին: Սակայն 1987 թվականին օրենքի և իրավունքի 3386-րդ հոդվածը փոխարինվում է 5226⁵⁰-ով և ձևափորվում է վերջնական փարբերակով 2004 թվականին:

«Պարմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պարմական միջավայրի պահպանության և օգբագործման մասին»

⁴⁸ The Law of the Protection of Cultural and Natural Heritage,

https://www.google.com/#hl=ru&tbo=d&scion=psy-ab&q=THE+MODEL+OF+TURKEY+IN+LEGAL+PROTECTION+OF++CULTURAL+HERITAGE&oq=THE+MODEL+OF+TURKEY+IN+LEGAL+PROTECTION+OF++CULTURAL+HERITAGE&gs_l=serp.12..35i39.24759.2759.0.25730.1.1.0.0.0.174.174.0j1.1.0...0.1c.kY5DnCT_Uxc&pbx=1&bav=on.2.or.r_gc._pw.r_cp.r_qf.&fp=183c141396d1fa7&bpcl=38897761&bih=1440&bih=787

⁴⁹ Law No. 2863 on Conservation of Cultural and Natural Property,

<http://www.wipo.int/wipolex/en/details.jsp?id=10971>

⁵⁰ The Law of Preservation of Cultural and Natural Properties (no: 2863) Act no: 5226 in 2004

Թուրքիայի օրենքի 4629-րդ⁵¹ հոդվածի պահանջների կարգարման ապահովում, համաձայն որի հուշարձանների պահպանության և օգտագործման բնազավառը պետական հագուստումներից բացի Փինանսավորվում է նաև հուշարձանների սեփականագործերի և օգտագործողների, մշակութային, հասարակական և այլ կազմակերպությունների ու հիմնադրամների, ինչպես նաև հիմնականում Թուրքիայի Մշակույթի և զբոսաշրջության նախարարության միջոցներով:

Հանրապետական և գեղական նշանակության հուշարձանների գեղագիտումը, հանրապետական նշանակության հուշարձանների փոփոխումը կարարվում են միայն բացառիկ դեպքերում՝ Թուրքիայի Հանրապետության Մշակույթի և զբոսաշրջության նախարարության թույլտվությամբ, իսկ գեղական նշանակության հուշարձանների փոփոխումը՝ պետական կառավարման գործադրային մարմինների թույլտվությամբ:

Հուշարձանների գեղագիտման և փոփոխման թույլտվություն դրվում է միայն լիազորված մարմնի եզրակացության հիման վրա:

Նախքան հուշարձանը գեղագիտելը կամ փոփոխելը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ դրանք կաբարելու ընթացքում, լիազորված մարմինը կազմակերպում է հուշարձանի գիրական ուսումնասիրման, չափագրման և լուսանկարման աշխատանքները:

Թուրքիայի Մշակութային և բնական հուշարձանների պաշտպանման օրենքի 13-րդ հոդվածով⁵² նախագենաված աշխարհանքների իրականացման հետ կապված ծախսերը կաբարվում են հուշարձանի գեղագիտման կամ փոփոխման թույլտվություն սրացողի հաշվին:

Հուշարձաններ ներառող գործադրներում շինարարական և այլ աշխարհանքների համար հողի հագուստումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխարհանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվտանգության ապահովումը կարգավորվում է

⁵¹ Article 12, Contribution Fund for the Repair of Immovable Cultural Property to be Conserved

⁵² Article 13 Law No. 2863 on Conservation of Cultural and Natural Property

Թուրքիայի օրենքի 42-րդ հոդվածով⁵³ և վերահսկվում է Թուրքիայի Մշակույթի և գրուաշրջության նախարարության կողմից:

Հուշարձաններ ներառող գրադրներում շինարարական, գյուղագնդեսական և այլ կարգի աշխարհանքների համար հողի հապկացումները, կառուցապարման, ինժեներաբրանսպորտային հաղորդակցության ուղիների նախագծերը սահմանված կարգով համաձայնեցվում են լիազորված մարմնի հետ:

Եթե նշված աշխարհանքները կարող են վրանգել այդ գրադրներում գպնվող հուշարձանների պահպանությունն ու անվթարությունը, նախապես, աշխարհանքների պարփիրագրությունը իրագործվում են հուշարձանների պահպանությունն ու անվթարությունն ապահովող միջոցառումներ՝ հետախուզություն, պեղումներ, վերականգնման աշխարհանքներ, բացառիկ անհրաժեշտության դեպքում՝ գեղագիտում և լիազորված մարմնի կողմից առաջարկվող այլ աշխարհանքներ:

Թուրքիան կրում է բարոյական և ֆինանսական պարասխանագվություն հայկական ժառանգության մնացորդների պահպանման համար, որը պեղը է դառնա իր քաղաքականության գերակա ուղղություններից մեկը մշակութային ոլորտում: Միայն նման վերաբերմունքը, համակցված համապարասխան գործողությունների հիման վրա կարող է հիմք հանդիսանալ իրական երկխոսությանը թուրք և հայ ժողովուրդների միջև:

⁵³ Article 42 Law No. 2863 on Conservation of Cultural and Natural Property

Գլուխ 2.

Հայկական դատմամշակութային ժառանգության իրավական կարգավիճակը Խորայելում

Այս հետազոտության նպատակն է նաև քրիստոնեական համայնքներում, հավկապես Խորայելի, Երուսաղեմի և Պաղեստինի հայ համայնքներում կարգավոր գործընթացների ուսումնասիրությունը, այն քաղաքական իրադարձությունների վերլուծությունը, որոնք նկագելիորեն ազդել են ազգամիջյան և միջդավանաբանական հարաբերությունների համակարգում հայ համայնքի դրության և հայկական մշակութային ժառանգության վրա, ինչպես նաև փարածաշրջանում գեղի ունեցած հիմնական քաղաքական իրադարձությունների ազդեցության առանձնահավկությունները Երուսաղեմի և Պաղեստինի հայ համայնքի վրա, հայ համայնքի և հայկական մշակութային ժառանգության պահպանությանը նպաստող և ընդհակառակը՝ խոչընդուների բացահայփումը:

Նեփազորության մեթոդաբանությունն է համակարգային վերլուծության մեթոդը, ինչը թույլ է փալիս կենդրոնացնել ուշադրությունը ինչպես խնդրի առանձին փարբերի, այնպես էլ այն գործոնների ամբողջ համալիրի վրա, որոնցով է պայմանավորված պարմական իրադարձությունների ընթացքը:

Աշխարհանքի ընթացքում օգտագործվել է նաև հետազոտության համեմարտական մեթոդը: Այն կիրառվել է հիմնականում հայ համայնքում գեղի ունեցած գեղնեցնցները և գործընթացները Երուսաղեմի և Պաղեստինի այլ ազգային-դավանաբանական խմբերում կարգաված համանման գործընթացների հետ համեմարտելիս:

Ներազուրության մեջ օգլագործվել են ռուսերեն, անգլերեն, երրայերեն և հայերեն գարբերակ:

Այդ նյութերն են՝ բրիտանական, հայկական, ինչպես նաև հրեական մամուլի հրապարակումները, քաղաքական գործիչների ելույթները, այն վիճակագրական գրվածները, որոնք բնութագրում են հայ համայնքի և այլ ազգային-դավանաբանական խմբերի սոցիալ-ժողովրդագրական զարգացումը: Կարևոր աղբյուրներից են նաև Խարայելի և Պաղեստինի ազգային-դավանաբանական խմբերի նկարմամբ իրականացված բրիտանական մանդապային իշխանությունների քաղաքականությունը 1920-1948 թթ. ժամանակաշրջանում: Կարևորագույն փաստաթղթերից են բրիտանական վարչակազմի այնպիսի որոշումները, ինչպիսիք են «Ժագավորի հրամանը Խորհրդում» (The Palestine Order in Council, 1922) և Դեկրետ կրոնական համայնքների կազմակերպման մասին (1926 թ.) որոշումները: Վերոնշված դեկրետների գործողությունը գրարածվում էր անգլիական իշխանությունների կողմից «ճանաչված» Պաղեստինի բոլոր կրոնական համայնքների, այդ թվում՝ լուսավորչական հայերի և կաթոլիկ հայերի նկարմամբ:

Երեք հիմնական մոնոթեիստական կրոնները՝ հուդայականությունը, քրիստոնեությունը և մահմեդականությունը իրենց աղբյուրներով անխօնիորեն կապված են Էրեց Իսրայելի հետ: Միիննավոր հրեաների, քրիստոնյաների և մահմեդականների համար ամբողջ աշխարհում այդ երկիրը համարվում է սուրբ: Նույն պարբառով Էրեց Իսրայելի գրարածքում կենդրոնացված են համեմատարար ավելի շատ այնպիսի կառույցներ, նյութական հուշարձաններ և առանձին վայրեր, որոնք այդ կրոնները դավանողների կողմից դիմում են որպես սուրբ վայրեր, քան որևէ այլ երկրում:

Սուրբ երկրում քրիստոնեական համայնքների պարբռությունը սկիզբ է առնում Հիսուս Նազովիցու կյանքի և արարչական գործունեության ժամանակներից: Ուսուցիչ մահից հետո նրա հեվլուրդների համայնքները, առավելապես հուդայական-քրիստոնեական հա-

մայնքները, միավորվեցին Առաքելական Եկեղեցում: Դրանք գործում էին Երուսաղեմում և նրա մերձակայքում, և առավելապես հուդայական-քրիստոնեական էին: Սակայն, սկսած մ. թ. 130 թվականից, երբ կայսր Աղրիանոսը հրամայեց հրեական մայրաքաղաքի տեղում կառուցել Էլիա Կապիկուինա քաղաքը, տեղական Եկեղեցին իր կազմով դառնում է ոչ հրեական: Այն մնաց միասնական և անբաժանելի մինչև առաջին համարի հերթական ժողովները: Մահմեդական նվաճումների ժամանակ, 7-րդ դարում, արևելաքրիստոնեական Եկեղեցին արդեն բաժանվել էր մի շարք ուղղությունների, որոնք, այնուամենայնիվ, շարունակում էին համարել պահպանել քրիստոնյաների համար սուրբ Վայրերը: Այդ Վայրերի շուրջ վեճերը փարբեր քրիստոնեական կրոնների միջև ծագեցին միայն Խաչակիրների թագավորության ժամանակաշրջանում (երբ հասկարգվեց արևմդյան կաթոլիկ Եկեղեցու գերակայությունը (predominium) Սուրբ Երկրում) և առանց մարելու շարունակվեցին մամլութերի և օպունանյան կառավարման փարիներին, ընդիուպ մինչև 1852 թ. «սպագուս-քվոյի» մասին միջեկեղեցական համաձայնագրի սպորագրում¹:

Այսօր քրիստոնյաները կազմում են Խրայելի ավելի քան 6 միլիոն քնակցության 2,1%-ը, հրեաները՝ 7 9,2%, մահմեդականները՝ 14,9%, դրուզները՝ 1,6%-ը: 2,2%-ը չունեն որոշակի կրոնական պարկանելություն²: Խրայելի քրիստոնյաները պատկանում են 35 փարբեր ուղղությունների, որոնք կապված են 4 հիմնական Եկեղեցիների հետ՝³ կաթոլիկ, ուղղափառ, հինարևելյան և բողոքական: Խրայելի խոշորագույն Եկեղեցին կաթոլիկ Եկեղեցին է. այն ունի 25000 ծխական: Ուղղափառ Եկեղեցին, որի մեջ ամենամեծը հունական Եկեղեցին է և հինարևելյան Եկեղեցիները, որոնք Խրայելում ներկայացված են հայ առաքելական Եկեղեցիով՝ մոտ 1500 ծխականներ, որոնցից մոտ կեսն ապրում է Երուսաղեմի Հին քաղաքի Հայկական թաղամասում, դպ-

¹ <http://www.orthodox-jerusalem.ru/publ/1-1-0-71>

² <http://www.pravoslavie.ru/news/051101174657.htm>

³ Statistical Abstract of Israel, 2009, CBS

փիներով՝ մոտ 1000 ծիսական, ասորական, եթովպական եկեղեցիով, և չորրորդը՝ բողոքական եկեղեցին, որին հաշվում են մոտ 3000-4000 ծիսականներ։⁴

Երուսաղեմի Հին քաղաքում ապրում են մոտ 5000 քրիստոնյաներ։ Եվս 10000 քրիստոնյաներ ապրում են Արևելյան Երուսաղեմում⁵։

Քրիստոնյաների թվաքանակը Խսրայելում ասդիմանաբար աճում է⁶։ Եթե 1996 թ. երկրում ապրում էին 123400 քրիստոնյաներ, ապա 2009 թ. վերջին՝ արդեն 151700 մարդ։ Մյուս պետություններում և տարածքներում (օրինակ, Սիրիայում, Իրաքում, Գազայի հարվածում, Հուդայում և Սամարիայում)⁷ նրանց թվաքանակն անընդմեջ նվազում է։ Դա կապված է ոչ այնքան ծնելիության ցածր ցուցանիշի հետ, որքան, առաջին հերթին, մահմերականների կողմից քրիստոնյաների նկարմամբ կիրառվող բռնություններով և ճնշումներով⁸։ Այսպիսով, Խսրայելը միակ գեղն է Մերձավոր Արևելքում, որտեղ նկարվում է քրիստոնյա բնակչության աճի գրենդենց։

Մերձավոր Արևելքում բնակվող ազգությունների մեջ Խսրայելի և Պաղեստինի հայ համայնքը առանձնահարուկ գեղն է գրավում։ Նրա պարմությունը սկսվում է ավելի քան դասնիհնգ դար առաջ՝ մ. թ. 4-րդ դարում, երբ Պաղեստին եկան առաջին հայ վանականներն ու ուխտավորները։

Երուսաղեմի և Պաղեստինի հայ համայնքն ունի քաղաքական գոյության յուրահարուկ փորձ։ 1908 թ. երիտրուրքական հեղափոխությունից հետո 60 դարվա ընթացքում երուսաղեմյան հայերը երեք անգամ փոխել են իրենց հպատակությունը։ Մինչև 1917 թ. նրանք ապրում էին օսմանյան փիրապետության տակ։ Բրիտանական կառավարման դարիներին Երուսաղեմի Հին քաղաքը, որտեղ բնակ-

⁴ Христианские общины Израиля. И.Эльдар.

⁵ Statistical Abstract of Israel, 2009, CBS Table 2.2 - Population, by religion (PDF)

⁶ <http://www.evangelie.ru/forum/t31883.html>

⁷ http://izrus.co.il/obshie_novosti/news/2008-06-02/1770.html

⁸ http://pravmir.ru/stat-content/sc_printer_2154.html

⁹ <http://www.i-r-p.ru/page/stream-event/index-9290.html>

վում էր հայ համայնքի գգալի մասը, ենթամանդաբային Պաղեստինի մայրաքաղաքի կենտրոնական շրջանն էր, իսկ Երուսաղեմը՝ միասնական քաղաքը: Այնուհետև, 1949 թ. հայերի բնակության շրջանը Հորդանանի Տաշիմիթյան թագավորության մասն էր, ընդ որում՝ դա գեղի ունեցավ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի որոշմանը հակառակ, որպես Երուսաղեմը հայքարարվել էր արքագործածքային միավոր՝ միջազգային հսկողության ներքո: Արդյունքում՝ Հորդանանի վերահսկողությունը Հորդանան գետի Արևմույան ափի և Արևելյան Երուսաղեմի նկարմամբ գործնականում չճանաչվեց միջազգային հանրության կողմից, թեև Հորդանանը Արևելյան Երուսաղեմը հոչակեց իր երկրորդ պաշտոնական, իսկ հետո նաև «հոգևոր» մայրաքաղաքը: Տայկական թաղամասը, ինչպես և Դին քաղաքն ամբողջությամբ, հայքնվեցին սահմանամերձ գորում: «Վեցօրյա պատերազմի» (1967 թ. հունիս) ժամանակ Երուսաղեմի Դին քաղաքի գրագիրը (այնպես գրնվող Տայկական թաղամասի հետ մեկվեղ) գրավեցին խրայելական ուժերը, որից հետո միավորված Երուսաղեմը հայքարարվեց Խրայելի միասնական և անբաժանելի մայրաքաղաքը: Արդյունքում՝ Երուսաղեմյան հայերը հայքնվեցին խրայելական ինքնիշխանության դրական: Վյու իրավիճակը անփոփոխ պահպանվում է մինչև մեր օրերը: Բարդ ներքաղաքական և արքաքին քաղաքական պայմաններում Երուսաղեմի և Պաղեստինի հայ համայնքի «կենսունակության» երևոյթը ներկայացված թեմային հաղորդում է հարուկ արդիական նշանակություն:

Երուսաղեմի կարգավիճակի և Խրայելի ու Պաղեստինի գրագիրը գրնվող գարբեր կրոնների սրբավայրերի խնդիրները մինչև այժմ կարգավորված չեն, իսկ Երուսաղեմի Դին քաղաքի հրեական և հայկական թաղամասերի կարգավիճակի հարցը բարդ միջազգային բանակցությունների առարկա է:

Նայ համայնքը 20-րդ դարի սկզբին հանրես էր զալիս որպես «Եկեղեցական» ազգային-կրոնական համայնք օսմանյան միլիեթների համակարգում: Վյու ժամանակաշրջանում միլիեթների համակարգը

քայլայվեց, և սկսվեց նոր գեսակի հայ ազգային ինքնության ձևավորման գործընթացը: Կազմավորվեցին աշխարհիկ կազմակերպություններ՝ ակումբներ և քաղաքական կազմակերպություններ: 20-րդ դարի 40-ական թթ. վերջում հայ համայնքը կրկին սեղմվեց Երուսաղեմի Հայկական թաղամասի և Սուրբ Հակոբյանց եկեղեցու սահմաններում: Ընդհանրապես, Խրայելի և Պաղեստինի հայ համայնքի մեծամասնությունը (ավելի քան 80 %) կենդրունացած էր Երուսաղեմում: Հայերն ապրում էին նաև Պաղեստինի Յափա, Հայֆա, Ռամֆա, Ռամլա, Բեթղեհեմ քաղաքներում: Երուսաղեմի հայ համայնքում ընթացող գործընթացները բնորոշ էին նաև Խրայելի և Պաղեստինի մյուս քաղաքներում ապրող հայ համայնքներին: Ներկայումս Խրայելում և պաղեստինյան գարածքներում, գարբեր գնահատականներով, բնակվում են 16000-20000 հայեր: Խրայելի հայ համայնքը կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խումբը կազմում են այն հայերը, որոնց նախնիները ապրել են այդ գարածքներում հարյուրամյակներ շարունակ: Այդ խմբի ներկայացուցիչները ապրում են Երուսաղեմի Հայկական թաղամասում, ինչպես նաև Հայֆայում, Թել Ավիվում: Նրանց մեծամասնությունն ունի խրայելական քաղաքացիություն: Որոշ երուսաղեմցի հայեր պահպանել են հորդանանյան անձնագրերը: Խրայելի հայ բնակչության երկրորդ խումբը ձևավորվել է հերիտորիալային գարածքի երկրներից զանգվածաբար ներգաղթած հայերից: Վերջին 16 գարիներին Խրայել են ներգաղթել մոտ 10000 հայեր, այդ թվում՝ խառն ամուսնական ընդունակություններից:

Խրայելի հայ համայնքի ներկայացուցիչները մբահոգված են գարածաշրջանի անկայուն իրավիճակով՝ պայմանավորված արարա-իսրայելական հակամարդությամբ, Իրարի և Լիբանանի իրավիճակով, Արևմուտքի երկրների և Սիրիայի, Իրանի միջև առկա թշնամական փոխհարաբերություններով: Պարբերաբար գլեղի ունեցող զինված հակամարդությունները, մահմեդական ծայրահեղականության աճը ընդունակ են ներգրավել հայկական սփյուռքին այս կամ

այն կողմում հակամարդության մեջ, ինչը խարիստում է համայնքային ինսպիրուվուների կայունությունը: Միևնույն ժամանակ, Խորայելի հայերին բնորոշ է հարմարվողականությունը ավանդական կենսակերպը պահպանելու ծգրման հետ համարելը, որոնք բարդ մերձավորարևելյան իրողությունների պայմաններում համայնքի գոյագրեթե կարևորագույն գործոններ են:

Պաղեսպիհնցի հայերն ունեն ինչպես հրեա, այնպես էլ արաք համայնքների հետ խաղաղ գոյակցության յուրօրինակ փորձ: Երուսաղեմի և Պաղեսպիհնի հայ համայնքի պարմությունն այդ ժամանակաշրջանում բնութագրվում է երկու փոխլրացնող գործունեություն: Մի կողմից, արևմդյան ազդեցությունն էր ավելանում նրա կենսագործունեության հիմնական կողմերի վրա, մյուս կողմից, աճում էին համայնքի ներսում ավանդական հիմքերը և հասարակական ինսպիրուվուները պահպանելու ծգրությունը և սոցիալ-քաղաքական կյանքի «պահպանողական» նորմեցումը: Դա թույլ վավեց Երուսաղեմի և Պաղեսպիհնի հայ համայնքին գոյագրեթե լուրջ բարդ քաղաքական պայմաններում:

Մինչև 1914 թ. հայ համայնքը ծգրում էր միջնորդի դեր կապարել արևմդյան պետքությունների և գեղական բնակչության միջև: Դրա հիմնական ուժը պաղեսպիհնցի հայերի արևմդյան գործարար վերնախավն էր: Ընդ որում, Երուսաղեմի և Պաղեսպիհնի հայ համայնքի ներկայացուցիչների մեծամասնությունը պահպանում էր կապը ավանդական կրոնական ինսպիրուվուների հետ, առաջին հերթին՝ Սուրբ Հակոբյանց եկեղեցու հետ: Այնուհետև հիմնական ուժ են դառնում աշխարհիկ ակումբների ակդրիվ գործունեությունը, նոր քաղաքական կազմակերպությունների սպեղծումը, սոցիալական շարժումը: Եթե առաջին փուլի ընթացքում հայ համայնքում առաջարկարդեր ուներ ֆինանսական վերնախավը, որը կապված էր եկեղեցու հետ, ապա 1915 թ. հետո առաջին պլան են դուրս գալիս քաղաքական կրոսակցությունները և ըստ շահերի գործող ակումբները:

Նայ համայնքը պարբռասպ չէր քաղաքական կյանքում, գննեսության, մշակույթի մեջ և սոցիալական բնագավառներում ընթացող

փոփոխություններին: Այլ ազգություններում կարարվող փոփոխությունները, թեև ուղղակիորեն չեն վերաբերում հայ համայնքին, որը մեկուսի կենսակերպ էր վարում, սակայն, միաժամանակ, առաջ էին բերում համայնքի ներսում որոշակի լարվածություն:

Հոգևորականության գերիշխանությունը խրայելական և պաղեսափինյան հայերի կյանքում, և համայնքի «եկեղեցական» բնույթի պահպանումը թույլ կրթեցին համայնքին առանց կորուսպների գոյագրելու ոչ միայն 1948-1949 թթ. առաջին արարա-խրայելական պատերազմի, Խրայելի և Անդրհորդանանի միջև տարածքային բաժանման, զանգվածային արդարագործի ընթացքում, այլև՝ նաև մինչև մեր օրերը:

Խրայելը, ամբողջական պաշտոնական անվանումը՝ **Խրայել Պետքություն**, (երրայերեն՝ מְצָרָעָה, արաբերեն՝ مَرْسَد) պետքություն է Ասիայի հարավ-արևմութքում, Միջերկրական ծովի արևելյան ափին: Այն հյուսիսում և հյուսիս-արևելքում սահմանակից է Սիրիային, արևելքում՝ Լիբանանին, Հորդանանին և Հորդանան գետի Արևմության ափի տարածքին, հարավ-արևմութքում՝ Եգիպտոսին և Գազայի հարվածին:

Հոչակվել է 1948 թվականի մայիսի 14-ին (5708 թվականի իյարի 5-ին) ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1947 թ. նոյեմբերի 29-ի № 181 բանաձևով (փես՝ «ՄԱԿ-ի պլանը Պաղեսափինի բաժանման վերաբերյալ»):

Համաձայն Անկախության հրչակագրի՝ Խրայելը հրեական պետքություն է¹⁰: Միևնույն ժամանակ, Խրայելը բազմազգ և ժողովրդավարական պետքություն է, որպես հրեաների հետ հավասար իրավունքներ ունեն մյուս բոլոր ազգությունները, անկախ դավանանքից՝¹¹ մահմետական արաբները, քրիստոնյա արաբները, դրուզները, բեդվիհները, սամարացիները, չերքեզները, հայերը և այլն: Մասնավո-

¹⁰ Декларация Независимости Израиля—статья из Электронной еврейской энциклопедии.

¹¹ Israel (англ.). Country Report. Freedom House (2007).

րապես, դրուգ և բեղվին պարզամավորները, արարական կուսակցությունները և պարզամավորները ներկայացված են Հնեսեփում:

Իսրայել Պետքությունը հրեական և ժողովրդավարական պերություն է, այն ունի իր անկախ իրավական համակարգը: Պետքության հոչակումից հետո նրա իրավական համակարգը գրնվում էր համընդհանուր իրավունքի պարբերն ասդիմանաբար փոխարինվեցին և փոխարինվում են յուրօրինակ իսրայելական իրավունքի նորմերով: Իսրայելի իրավական համակարգում հարուկ գեղ է գրավում հրեական իրավունքը: Որոշ բնագավառներում, հիմնականում ընդունելի իրավունքի բնագավառում, կիրառվում է գարբեր համայնքների կրոնական իրավունքը: Իսրայելում ձևականորեն չկա սահմանադրություն, և իրավական համակարգի հիմնական սկզբունքները հենվում են հիմնական օրենքների վրա, որոնց սպեհման գործընթացը դեռևս չի ավարտվել, ինչպես նաև օրենքների մեկնաբանման վրա՝ հիմք ընդունելով Իսրայելի հիմնարար սահմանումը՝ «հրեական և ժողովրդավարական պերություն»: Սահմանադրական հեղափոխությունը, որը, համաձայն որոշ իրավաբանների կարծիքների, գեղի ունեցավ իսրայելական իրավունքում, չեր կարող չանդրադառնալ սահմանադրական իրավունքի և պերության իրավական համակարգի վրա: Իսրայելում իրականացվել է իշխանությունների բաժանման սկզբունքը, և առավելապես պահպանվում է հավասարակշռությունը իշխանությունների միջև: Մինչև 1917 թվականը Էրեց Իսրայելի (կամ Պաղեստինի) պարածքը Օսմանյան (Օգոստանյան) կայսրության մի հարվածն էր: Բացառությամբ հին հրեական իրավունքի, այլ հնագոյն իրավական համակարգերը, որոնք գործել էին այդ դարածքում մինչև այն Օգոստանյան կայսրության կողմից զավթելը, չեին ազդել իսրայելական իրավունքի վրա:

Էրեց Իսրայելը Օգոստանյան կայսրության ինքնավար միավորը չէր, այլ Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի հսկայական գարածքներով սփռված կայսրության գարածաշրջաններից մեկն էր:

Այդ պարճառով այդ գարածքում չկար սեփական օրենսդրություն, այլ գործում էր օգոնմանյան իրավունքը:

Այսօր իսրայելական իրավունքում կան որոշ նորմեր, որոնք մնացել են օգոնմանյան օրենքներից, օրինակ, հողերի դասակարգման հարցը: Օգոնմանյան քաղաքացիական ընթացակարգի մասին իրամանագրի 80-րդ և 81-րդ հոդվածները դեռևս կիրառվում են իսրայելական իրավունքում: Այդ հոդվածները կապված են քաղաքացիական իրավունքում ապացուցման հարցերի հետ. բանավոր վկայությունները գերակշռում են այն փաստաթղթերի և գործարքների նկարմամբ, որոնց ապացուցումը պահանջում է գրավոր փաստաթղթեր:

1917 թվականի Սինայ-Պաղեստինյան ռազմարշավի ընթացքում Պաղեստին ներխուժեցին բրիտանական զորքերը: Բոլոր դատավորները լրեցին երկիրը թուրքական զորքերի հետ, և բրիտանական զորքերի հրամանագրար, գեներալ Ալեքսանդր Հանձնարարեց սպա Օրմե Բիզլենդ Կլարկին սպեղծել նոր դատական համակարգ: Կլարկից ընդամենը մի քանի ամիս պահանջվեց նախապարհասրության համար, և 1918 թ. հունիսի 24-ին մի քանի քաղաքներում բացվեցին դատարաններ: Կլարկի սպեղծած համակարգը նկարելիորեն հիմնված էր բրիտանական իրավունքի վրա, իսկ ինքը՝ Օրմե Բիզլենդ Կլարկը համարվում է Պաղեստինում բրիտանական իրավունքի հիմնադիրը¹²:

Էրեց Իսրայելի նկարմամբ բրիտանական մանդապի ուժի մեջ մտնելուց հետո հրապարակվեց «1922 թ. թագավորի իրամանը Խորհրդում (Պաղեստինում)»¹³, որի 46-րդ հոդվածում սահմանված էր, որ մինչև 1914 թ. նոյեմբերի 1-ը (այն օրը, երբ Թուրքիան մրավ Առաջին համաշխարհային պարերազմի մեջ) գործող օգոնմանյան օրենքները շարունակում են գործել այնքանով, որքանով դրանք կիրառելի են գեղական պայմաններում և չեն հակասում բրիտանական մանդապային օրենսդրությանը:

¹² Dan Izenberg. Founding father. The Jerusalem Post (22.09.2008).

¹³ Указ короля в Совете 1922 года.

Իրա հետ մեկվելու, 46-րդ հոդվածում նշված էր, որ այն հարցերը, որոնք չեն կարգավորվում թուրքական օրենսդրությամբ, դրանց առնչությամբ, դափարանները պետք է ղեկավարվեն անզիհական ընդհանուր իրավունքով և արդարության դոկտրիններով։ Խարայելում օրենքը Հնեսեփի կողմից ընդունված նորմատիվ ակտն է, իրամանագիրը՝ Հնեսեփին նախորդած օրենսդրի՝ օրինակ, Գերագույն կոմիսարի կողմից իրափարակված նորմատիվ ակտը։ Երկու նորմատիվ ակտերն ունեն հավասար իրավաբանական ուժ։

Այդ ժամանակաշրջանում ձևավորվել էին խարայելական իրավունքի ապագա համակարգի շաբ բնութագրական հարկանիշներ։ Այդ մասին են վկայում ափենակալների դափարանի բացակայությունը քրեսական դափավարության ժամանակ, պարտադիր ուժ ունեցող նախադեպը և իրավունքի այդ համակարգի շաբ այլ առանձնահարկություններ։ Հնդիանուր առմամբ, ներկայումս Խարայելում գործող ընդիանուր իրավասության և հարուկ դափարանների կառուցվածքը նույնպես կազմավորվել է մանդատի ժամանակաշրջանում։ Վյափիսով, բրիփանական իրավական համակարգը հսկայական աղդեցություն է ունեցել խարայելական իրավունքի վրա, սակայն պետքության անկախության հոչակումից դասնամյակներ անց Խարայելում շաբ ջանքեր են գործադրվել, որպեսզի ազարվեն այդ իրավական համակարգից։

Խարայել պետքության հոչակումով անհրաժեշտություն ծագեց կարգավորելու նրա իրավական համակարգը։ Պահեստինի կառավարման բրիփանական մանդապն ավարտվելու նախօրեին սրենդվեց Ազգային խորհուրդ¹⁴ որպես Խարայել Պետքության իշխանության ապագա ինսպիրուտների հիմք։ Խորհուրդն ընդունվեց էր, այն նշանակվեց Ազգային կոմիտեի և Հրեական գործակալության կողմից, որպեսզի խորհուրդը ներկայացներ հրեա բնակչության քաղաքական բոլոր ուժերը։ 1948 թ. մայիսի 14-ին Ազգային խորհուրդը հոչակեց

¹⁴ <http://www.knesset.gov.il/review/ReviewPage3.aspx?kns=0&lng=3>

պերության սպեղծումը, և այն կրզիս ժամանակավոր Պերական Խորհուրդ: Պերության հոչակումից հետո կազմավորվեց նոր իրավաբանական միավոր՝ «Իսրայել Պերություն», որին ոչ մի պարբավորություններ չէին կապում նախորդ իշխանության հետ:

Որպեսզի երիտասարդ պերությունը չմնար առանց ուժ ունեցող իրավունքի, պերության հոչակման հետ միաժամանակ իրապարակվեց իրամանագիր (դեկրետ), որով հիմք դրվեցին նոր պերության իրավունքի հիմնադրույթները: Համաձայն իրամանագիր՝ ժամանակավոր Պերական Խորհուրդը դառնում էր օրենսդիր մարմին, իսկ մինչև պերության հոչակումը գործող իրավունքը մնում էր ուժի մեջ, թեև այդ իրավունքի մեջ մրցվեցին որոշ փոփոխություններ: Վյապիսով, իրամանագրով հայրարարվեց բրիտանական իրավունքը փոխառելու մասին, սակայն այն նաև հոչակեց, որ այդ իրավունքը կրարեփոխվի օրենսդիր մարմին կողմից ընդունված օրենքների շնորհիվ:

1948 թ. մայիսի 9-ին իրամանագիրը փոփարինվեց ժամանակավոր Պերական Խորհրդի իրավարակած «Իշխանության համակարգի և դարձական իշխանության մասին որոշմամբ»¹⁵: Որոշման 11-րդ հոդվածում նշված էր.

«Երեց Իսրայելում գործող իրավունքն ուժի մեջ է նաև 1948 թվականի մայիսի 14-ից հետո, եթե այն չի հակասում սույն որոշմանը կամ ժամանակավոր Պերական Խորհրդի կողմից ընդունված այլ օրենքներին և այն պայմանով, որ կմրցվեն այնպիսի փոփոխություններ, որոնք բխում են Իսրայել Պերության և նրա իշխանության մարմինների սրբեղության փաստից»:

Ավելի ուշ՝ 1949 թ. հունվարի 25-ին, անցկացվեցին Հիմնադիր ժողովի ընդունություններ: Ընդունված Հիմնադիր ժողովը ընդունեց Օրենք անցումային շրջանի մասին¹⁶, որի համաձայն Իսրայելի խորհրդա-

¹⁵ http://www.knesset.gov.il/review/data/heb/law/kns0_govt-justice.pdf.

Закон о переходном периоде 1949 года (ивр.).

¹⁶ http://www.knesset.gov.il/review/data/heb/law/kns1_transition.pdf,

Постановление о системе власти и судебной власти 1948 года (ивр.).

րանք կոչվում էր Քնեսեփ, իսկ Տիմնադիր ժողովը՝ առաջին գումարման Քնեսեփ:

Իսրայել պետության սրբեղծման օրվանից Քնեսեփն ընդունել է այնպիսի օրենքներ, որոնք գրեթե ամրողությամբ փոխարինել են բրիֆանական օրենսդրությունը իրավունքի բոլոր բնագավառներում (բացառությամբ իրամանագրերը ապացույցների մասին, քաղաքացիական իրավախսիքումների (դեկլիքների) մասին և պարզամուրհակների մասին, սակայն դրանց վերաբերյալ երրայերենով դրվեցին ժամանակակից իսրայելական ծևակերպումներ): Գործադիր իշխանության մարմինների, գլխավորապես՝ նախարարությունների կողմից, լրացուցիչ իրավարակվեցին բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր: Այսպիսով, ներկայիս պետության իրավական բնագավառների մեծամասնությունում գործում է նորմագրիվ-իրավական ակտերի յուրօրինակ և անկախ համակարգ:

Իսրայելի դատարանն ընդունել է մի շարք նախադեպային որոշումներ, որոնք բնորոշ առանձնահավաքություններ են հաղորդում ոչ միայն նոր իսրայելական օրենսդրությանը, այլ նաև դեռևս պահպանված մանդապային և օգոնմանյան օրենսդրության գարբերին¹⁷: Եթե պետության սրբեղծմանց հետո առաջին գարբերին դատարանները դեկավարվում էին անգլիական նախադեպերով, ապա այդպիսի գործելակերպն այժմ գրեթե դադարել է, և հղումները օգարերեկրյա (օրինակ, անգլիական կամ ամերիկյան) իրավունքի համակարգերին կափարվում են միայն համեմափական վերլուծության համար և չունեն պարփառիր բնույթ:

Իրավունքի հիմնադրույթների մասին 1980 թ. ընդունված Օրենքը

¹⁷ Այսպես, օրինակ, սկսած 1970-ականներից, Գերագոյն դատարանն ավելացրել է Քաղաքացիական իրավախսիքումների մասին իրամանագրում (1928 թ. մանդապային օրենք, որը հիմնված է համանուն կիպրական օրենքի վրա) սահմանված անփորության մասին հիմնադրույթներին մի շարք դատական որշումներ և դրանով իսկ սրբեղծել է ժամանակակից իսրայելական վերնաշենք, որը կազմված է «զգուշություն պահպանելու յուրահարուկ պարփակության հետ» և «զգուշություն պահպանելու ընդհանուր պարփակության հետ»:

պարստադիր ուժ ունեցող իրավունքի այլ աղբյուրների շարքում կարևոր դեղ կրվեց հրեական իրավունքին:

Իսրայելական իրավունքի աղբյուր դարձան այն միջազգային պայմանագրերի որոշ դրույթներ, որոնց կողմերից մեկը Իսրայելն էր, ինչպես նաև՝ միջազգային իրավունքի այլ աղբյուրների դրույթներ:

Այսպիսով, ամփոփելով վերոնշվածը, կարելի է նշել իսրայելական իրավունքի հետևյալ աղբյուրները՝ Հնեսեփի օրենքները, Ենթաօրենսդրական ակդերը, դադական նախադեպերը, ուժը պահպանած մանդապային և օսմանյան իրավունքի փարբերը, հրեական իրավունքը, փարբեր համայնքների կրոնական իրավունքի փարբերը և Իսրայելի կողմից ճանաչված միջազգային իրավունքի դրույթները:

Կրոնական բազմակարծության հանդեպ պեսպության սկզբունքային վերաբերմունքը արդահայպվում է 1948 թ. Իսրայելի անկախության հռչակագրում, որպես նշվում է՝ «Իսրայել Պետրությունը... հիմնվում է ազագության, արդարության և խաղաղության սկզբունքների վրա, համաձայն Իսրայելի արարիչների գաղափարների, ապահովում է իր քաղաքացիների հասարակական և քաղաքական իրավունքների ամրող հավասարությունը առանց կրոնական, ռասայական կամ սեռային փարբերության, ապահովում է կրոնի, խղճի ազագությունը, մայրենի լեզուն օգտագործելու իրավունքը, կրթության և մշակույթի իրավունքը...»¹⁸:

Անկախության հռչակագիրը հրեա ժողովրդի ազգային ձգբումների և նրա ժողովրդավարական սկզբունքների արդահայպությունն էր, որոնց նկարմամբ հավաքարմությունը օրենսդրական հասդարում ունեցավ և պահպանվում է օրենքով: Ցանկացած համայնք իրավունք ունի առանց խոչընդունելի հետևել իր կրոնական ուսմունքին, անցկացնել կրոնական արարողություններ, նշել փոներ և ունենալ շաբաթական մեկ անգամ հանգստի օր և կառավարել իր ներքին գործերը¹⁹:

¹⁸ <http://www.jewishagency.org/JewishAgency/Russian/Education/Jewish+Life/Festivals/Independence+Day>

¹⁹ <http://stateofisrael.com/declaration/>

Իսրայելն ընդգծված կերպով չի միշամբում սուրբ վայրերի կառավարման գործերին, համայնքի ներսում հոգևորականների նշանակմանը, դպրոցական կրթությանը և դաստիարակություններին: Իսրայելի քրիստոնյաների համար կիրակի օրերը և քրիստոնեական տոնները պաշտոնապես ճանաչվել են ոչ աշխատանքային օրեր: Քրիստոնյա համայնքներն ունեն իրենց փարրական և միջին դպրոցները:

Հսկ ավանդության, բարձրագույն եկեղեցական հիերարխիայի ներկայացուցիչները մասնակցում են իսրայելական հանրային և քաղաքացիական արարողություններին (Քննեսեփի նստաշրջանների բացում, Անկախության օրվան նվիրված տոնակապարություններ և այլն), իսկ իսրայելական կառավարության ներկայացուցիչները հրավիրվում են քրիստոնեական համայնքների փարքեր արարողություններին (Եկեղեցիների օծում, բարձրագույն եկեղեցական աստիճանների ձեռնադրում և այլն), ինչպես նաև ծննդյան և զարկի ժամերգություններին: Նոր փարվա նախօրեին (ըստ Գրիգորյան օրացույցի) Իսրայելի նախագահը երկրի քրիստոնեական դեկավարների պատվին հրավիրում է ընդունելություն:

Քրիստոնյա արաբները ազադված են զինվորական ծառայությունից: Այն քրիստոնյաները, ովքեր ժամանել են երկիր հրեա ընդունիքների անդամների հետք Վերադարձի մասին օրենքի շրջանակներում, ենթակա են զինվորական ծառայության, քանի որ ունեն այլ կարգավիճակ:

Իսրայելում գործում են ռաբբինական, մահմեդական, քրիստոնեական և դրուզական կրոնական դաստիարակություններ:

Կրոնական դաստիարակությունը հարգուկ դաստիարակություն է, որը քննարկում է Իսրայելի քաղաքացիների և բնակիչների անձնական կարգավիճակը, ինչպես նաև մի շարք այլ հարցեր: Կրոնական դաստիարակությունը կարգավիճակը սահմանվել է Դաստիարակության կարգի մասին հիմնական օրենքով և այլ օրենքներով: Կրոնական դաստիարակությունը կապահպահվում է իրավասության մեջ են մդնում այն գործերը, որոնք կապ-

ված են իրեաների, մահմեղականների, դրուգների և այն քրիստոնյաների ամուսնության և ամուսնալուծության հետ, որոնք վերաբերում են Իսրայելում պաշտոնապես ճանաչված քրիստոնյա համայնքներին²⁰: Այդ դաստիարակի բացառիկ իրավասության մեջ են նպնում նաև այն իհմնադրամների սրբեծման և կառավարման հարցերը, որոնք հիմնվել են կրոնական իրավունքի համաձայն²¹:

Որոշ հարցերում կրոնական դաստիարակությունը համընկնում է շրջանային դաստիարակություն հետ: Կրոնական դաստիարակությունը վարում է կրոնի հարցերով նախարարը²²:

Եկեղեցական կրոնական դաստիարակությունը քննարկում են Իսրայելում այն քրիստոնյաների անձնական կարգավիճակի հարցերը, ովքեր պատկանում են ճանաչված քրիստոնեական համայնքներից որևէ մեկին²³: «Նամաձայն Էրեց Իսրայելի վերաբերյալ Խորհրդում թագավորի հրամանագրի՝ ճանաչված են համարվում այն քրիստոնեական համայնքները, որոնց անվանումները մկնցված են Դրամանագրում նշված ցուցակում, ինչպես նաև կառավարության որոշմամբ պաշտոնապես հայդարարված քրիստոնեական համայնքները»: Իսրայելում մի շարք քրիստոնեական կրոններ սրբացել են «պերության կողմից ճանաչված» կարգավիճակ: Դեռևս օգոստանյան ժամանակաշրջանում սրբեղծված պարճառներով այդ համայնքների կրոնական դաստիարակությունն է վերապահվում այն հարցերի իրավասությունը, որոնք կապված են այդ կրոնների անդամների դավանանքի հետ, ինչպիսիք են՝ ամուսնությունը, ամուսնալուծությունը և այլն: Իսրայելում ճանաչված կրոններն են՝ հույն ուղղափառ Եկեղեցին, հայ առաքելական Եկեղեցին, ասորական ուղղափառ Եկեղեցին, հռոմեական

²⁰ <http://www.knesset.gov.il/laws/special/heb/yesod10.pdf>

²¹ <http://elyon1.court.gov.il/heb/rashut/mavo.htm#2>

²² Хаим Коэн. Право (ивр.).— Израиль: Издательство Институт Бялика, 1991.—С. 414-415.—ISBN 965-342-567-6

²³ <http://www.court.gov.il/heb/home.htm>

²⁴ Указы короля в Совете относительно Эрец Исраэль 1922-1947 годы (ивр.)

կաթոլիկ եկեղեցին, մարոնիֆրական եկեղեցին, հոյն կաթոլիկ մելկի-փական եկեղեցին, աստրական կաթոլիկ եկեղեցին, հայ կաթոլիկ եկեղեցին և այլ «հինարևելյան կրոններ»: Ավելի ուշ այդ ցուցակում ընդգրկվեց յութերական եկեղեցին, իսկ 1970 թվականից՝ անզիկյան ավեքարանչական եկեղեցին²⁵:

Այլ քրիստոնեական համայնքների ներքին ինքնավարությունը չի փարածվում դափավարության վրա, սակայն «չճանաչվածների» կարգավիճակի բացակայությունը չի ազդում այդ ոչ մեծ համայնքների՝ իրենց կրոնն ազատ դափանելու վրա:

Բացի Էրեց Իսրայելի վերաբերյալ Խորհրդում թագավորի հրամանի 54-րդ հոդվածի, քրիստոնեական դափարանների կառուցվածքի, դափավորների նշանակումների և դափավարության կարգի հետ կապված հարցերը չեն սահմանվում իսրայելական օրենքներում, և այդ հարցերը կարգավորվում են յուրաքանչյուր եկեղեցու կողմից, իր ինքնավարության շրջանակներում: Այդ իրավիճակը կարող է առաջացնել որոշակի դժվարություններ, քանի որ որոշ եկեղեցիների բողոքարկող ավյանները և նրանց բարձրագույն հեղինակությունները գփնվում են արդասահմանում: Եթե Իսրայելի կրոնի հարցերով նախարարությունը լուծարվեց, քրիստոնեական կրոնական դափարանների հետ կապված հարցերի կառավարումը դրվեց արդարադափության նախարարությանը²⁶:

Չնայած Իսրայելն ունի փոքր դարածք, սակայն այն հարուստ է հսկայական քանակությամբ հնագույն հնագիտական ռեսուրսներով: Դա բացադրվում է այն հնագույն պետքությունների հարուստ պարմությամբ, որոնց դարածքում այժմ գփնվում է Իսրայելը: Իսրայելում կան երեք մոնոթեիստական կրոնների՝ հուդայականության, քրիստոնեության և մահմեդականության համար բազմաթիվ սրբավայրեր: Դրանց հասանելիությունը և սրբավայրերին երկրպագելը երաշ-

²⁵ <http://www-r.openu.ac.il/radio/radio30.html>(ևր.)

²⁶ <http://www.justice.gov.il/mojheb/>, Министерства юстиции Израиля.

խավորվում է բոլոր հավաքացյաներին, անկախ նրանց կրոնական պարկանելությունից:

Դայ առաքելական եկեղեցու պարմությունը Սուրբ Երկրում սկսվում է 301 թվականին, երբ Հայաստանը քրիստոնեությունը հռչակեց որպես իր պետական կրոն և այդպիսով դարձավ աշխարհում առաջին քրիստոնեական երկիրը: Դայ համայնքը Երուսաղեմում գոյություն ունի 5-րդ դարից: Երուսաղեմի Հայոց պարբիարքությունը ստեղծվել է 1311 թվականին²⁷: 19-րդ դարի վերջին, և, հարկադիր, Առաջին համաշխարհային պարերազմից հետո, գեղական հայ համայնքի թվաքանակը էապես ավելացավ՝ կապված 1915 թ. ջարդերից փրկված բազմաթիվ փախարականների ժամանելու հետ: Այսօր Խորայելում ապրում են մոտ 15000 հայեր: Բացի Երուսաղեմից, կազմակերպված համայնքներ են գործում Յաֆայում, Հայֆայում, Բայր-Յանում և Ռամաթ-Գանում: Ընդ որում, Երուսաղեմում, Յաֆայում և Հայֆայում հաջողությամբ գործում են հայկական ակումբները: Սակայն հայ համայնքի սիրքը Երուսաղեմի Հին քաղաքի հայկական թաղամասն է: 16-րդ դարում թուրքական սուլթան Սուլեյման Դրաշալու հրամանով Երուսաղեմի այդ հարվածը շրջապարվեց պարիսպով: Հին քաղաքի մակերեսը մոտ 85 հեկտար է: Այն բաղկացած է 4 թաղամասերից՝ քրիստոնեական, իրեական, մահմեդական և հայկական: Հայկական թաղամասը արևելքից և հարավից պաշտպանում են Հին քաղաքի պարիսպները, իյուսիսից Հայկական թաղամասը սահմանակից է Քրիստոնեական թաղամասին, իսկ արևմուտքից՝ Դրեական թաղամասին: Չնայած հայերը քրիստոնեություն են դավանում, Հայկական թաղամասը գինվում է Քրիստոնեական թաղամասից առանձին, և Երուսաղեմի Հայոց պարբիարքությունը մնում է անկախ²⁸: Ընդհանուր առմամբ, Հայկական թաղամասը գրադեցնում է Հին քաղաքի տարածքի մոտ 1/5-ը: Համաձայն

²⁷ <http://www.holyland.org/>

²⁸ Hintlian, K., History of the Armenians in the Holy Land. Jerusalem: St. James, 1976.

փարբեր աղյուրների՝ հայերը Դարեսպինում, մասնավորապես, Երուսաղեմում ապրել են Տիգրան ՄԵծի ժամանակներից (մ.թ.ա. 1-ին դար) և հարևանների հետ մշտապես ունեցել են մշակութային և գոնդեսական կապեր: Ական 4-րդ դարից, Երուսաղեմում հայունվում են առաջին հայ հոգևորականները, և կառուցվում են առաջին հայկական եկեղեցիները և վանքերը, իսկ 7-րդ դարում այսպես հիմնվում է Հայոց պատրիարքությունը: Վյու զիսավորող Աքրահամ պատրիարքը (մահացել է 669 թ.) հայունի է պատմության մեջ ոչ միայն այն բանով, որ եղել է Երուսաղեմի առաջին հայ պատրիարքը, այլ նաև այն պարճառով, որ հանդիպել է մահմեդականության հիմնադիր Մուհամեդ մարզարեին: Նենց այն ժամանակ Աքրահամ պատրիարքը պայմանավորվել է մարզարեի հետ, որ ջիզյայի (հարկ՝ շնչից) փոխարեն նա սպանում է հայուկ հավաքարմագիր, որի համաձայն, Հայ առաքելական եկեղեցու հովանու քակ են հայունվում ասորական, դպրիական և եթովպական եկեղեցիները²⁹: Հայոց պատրիարքությունը այդ հավաքարմագրի համաձայն սպանում է սուրբ Շակորյանց եկեղեցին, Շիսու Քրիստոսի գերեզմանը և այլն: Մոփավորապես այդ ժամանակ էլ կազմավորվում է Երուսաղեմի հայկական աշխարհիկ համայնքը՝ Սիոն լեռան գրածառություն: Վյուեղ՝ Հայկական փողոցում (Ruda Armeniorum), ապրում էին արհեստավորներ և առևտրականներ: Հայ համայնքը հայկապես ամրապնդվում է Խաչակրաց արշավանքների և Կիլիկիայի հայկական պետության գրաիներին (11-15-րդ դարեր): Հայկական թաղամասում են գրնվում Հայ առաքելական եկեղեցու Երուսաղեմի պատրիարքությունը, սուրբ Շակորյանց եկեղեցին, որի երկարյա դարպասներին գրված է. «Այս դարպասները կառուցվել են պատրիարք Կրիկորի նախաձեռնությամբ 1646 թ.»: Պատրիարքությանը կից գործում է գրադարանը, որտեղ հաշվում է ավելի քան 30000 գիրք: Որոշ ձեռագրեր պատկանում են 13-րդ դարին: Պատրիարքությանը կից գործում են նաև Օս-

²⁹ Myers, N., "Ultimate Survivors: Jerusalem's Armenian Community."

The World & I (August 1997): 232-241.

մանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության թանգարանը, հոգևոր ճեմարանը, վանքը և մի շարք այլ եկեղեցիներ³⁰: Շելքագայում հայերը քաղաքի այլ բնակիչների հետ մասնակցել են և ներկա են եղել Երուսաղեմի պարմությանը: Պաղեսպիհնում և Խարայելում հայ համայնքի թվաքանակը պարմական գրաբեր ժամանակաշրջաններում պարբերաբար ավելացել է (այդպես էր Առաջին համաշխարհային պարերազմից հետո) կամ՝ նվազել: Ըստ Յ. Մոմշյանի գլուխների՝ Հայկական թաղամասում ապրում են Երուսաղեմում ապրող 2000 հայերից մոտ 600-ը: Համաձայն այլ գլուխների՝ թաղամասում ապրում է 2200 մարդ, որոնցից 1200-ը՝ հայեր, 350-ը՝ մահմեդականներ, մնացածը՝ հրեաներ:

7-րդ դարում Սուրբ Երկրում հայերն ունեին 70 վանքեր և եկեղեցիներ: Դրանք կառուցել են Հայաստանի իշխանական գրները, և այդ-գույք հայկական թեմերից միաբաններ էին ուղարկվում: Ավելի ոչ մեծ ավանդ ունեցան Կիլիկիայի հայ թագավորները՝ կառուցելով եկեղեցիներ և կարարելով նվիրաբերություններ: Այսօր Երուսաղեմի Հայոց պարիփարքության իրավասության դասը են գրնվում հետևյալ վաճառքերն ու եկեղեցիները.

1. Սրբոց Հակոբյանց: Վանքում են գրնվում նաև սուրբ Էջմիածին եկեղեցին, սուրբ Սարգիս և սուրբ Սովեհանոս մարտուները, ինչպես նաև գրեթե երեք դասնյակ սուրբ սեղանները:

2. Սուրբ Թեղողոս եկեղեցին գրնվում է Կիլիկիայի Շեթում Աթագավորի կողմից իր գոհիված որդի Թորոսի հիշագույնին կառուցված վանքի դարաձեռու:

3. Սուրբ Տրեշպակապետաց վանքը, որն, ըստ ավանդության, կառուցվել է Աննա քահանայապետի դասը գոհիված որդի Տիրոջ քերել են Զիյենյանց այգում ձերբակալելուց հետո հարցաքննելու, իսկ հետո դարել են Կահափայի մոտ:

4. Սուրբ Փրկիչ վանքը՝ քահանայապետ Կահափայի դասը գոհում:

³⁰ <http://www.armenian-patriarchate.org/>

5. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցին Նոր քաղաքում:
6. Սուրբ Հարության տաճարը: Տաճարը բաժանված է վեց Եկեղեցիների միջև՝ Ուղղափառ, Կաթոլիկ, Հայ, Ղպտի, Ասորական և Եթովպական: Պարանապետի սրբավայրը ընդհանուր է: Հայերին են պարկանում նաև՝
- «Երկրորդ Գողգոթա» Եկեղեցին, Վերնագունը (վանքի վերին սահմանը).
 - Յուղաբեր կանանց խորանը.
 - Ասպածածնի ուշաթափման վայրը.
 - Սուրբ Հովհաննեսի Վրիմաթացու Եկեղեցին.
 - Քրիստոսի հանդերձների բաժանման խորանը.
 - Սուրբ Վարդան Եկեղեցին, որը գտնվում է սր. Գրիգոր Եկեղեցու հետևում: 1970-ականներին Սր. Գրիգոր Եկեղեցու վերանորոգման ժամանակ հայդրանաբերվեց դափարկ բարածություն: Պեղումներից հետո հայդրանաբերվեցին մեծ սենյակ և 4-րդ դարի քար՝ լափիներեն մակագրությամբ և առաջապահանավակի պարկերով: Այսպես կառուցեցին նոր սր. Վարդան Եկեղեցին, որը սրբագուս-քվոյից դուրս է:
 - Սուրբ Հովհաննես Ավելարանիչ Եկեղեցին. գտնվում է սուրբ Հարություն վանքի գավիթում:
 - Գերսեմանի պարփեզը: Սուրբ Ասպածածնի գերեզմանը: Հայերն այսպես ունեն ջրս սուրբ սեղան: Մեկը կառուցվել է սուրբ Հովհաննեսի Ասպածահոր գերեզմանի վրա, իսկ գերեզմանի ճակարային կողմում Կիլիկիայի թագավոր Շեթումի կողմից կառուցվել է սուրբ սեղան: Սր. Ասպածածնի գերեզմանն ընդհանուր է հոյների հետ միասին:
8. Բեթղեհեմ. Ծննդյան տաճար: Հայերն ունեն երկու սրբավայր Ծննդյան տաճարում.
- Ծննդյան այր, ընդհանուր է հոյների հետ.
 - Սուրբ Հակոբ Եկեղեցին՝ Բեթղեհեմի Ծննդյան հայկական վանքում:

9. Սուրբ Նիկողայոս վանքը՝ Յափայում՝ Միջերկրական ծովի ափին:

10. Սուրբ Եղիա Մարգարե եկեղեցին՝ Շայֆայում:

11. Սուրբ Գևորգ վանքը՝ Ասմլեռում³¹:

Թեև Սուրբ Երկրում հայկական եկեղեցիների ունեցվածքը կորսվել է բյուզանդական կայսրերի և մահմեդական փիրակաների հալածանքների հետևանքով, հույն և լատին պարբիարքությունների հետ հավասարապես, Շայոց պարբիարքությունն ունի սեփականության իրավունք Սուրբ Երկրի հիմնական սրբությունների մի հավաքածի նկագմամբ, այդ թվում՝ Բեյթեհեմի Ծննդյան վանքի և Երուսաղեմի Շարության տաճարում, մասնավորապես, լեզենդար Բարեշնորի կրակով ճեղքված այս նկագմամբ:

Ինչպես է կարգավորվում Խարայելում մշակութային ժառանգության իրավական պաշտպանությունը: Շատ պետքությունների թվում Խարայելը ևս անհանգստացած է իր մշակութային և հնագիտական ժառանգության պահպանությամբ և սրբեղծել է օրենսդրական բազա այդ խնդիրը կարգավորելու համար:

Օրինակ, 1967 թ. հունիսի 27-ին Քննեսեփի կողմից ընդունված, սրբազն վայրերի պահպանության մասին օրենքում նշված է. «Սրբագան վայրերը պեսք է պաշտպանված լինեն պոծկելուց, դրան հավասարապես՝ ցանկացած ուրինձգությունից և այլ գործողություններից, որոնք կարող են խախտել ցանկացած կրոնների հավաքացյալների մուտքը նրանց համար սրբազն վայրեր, կամ վիրավորում են նրանց զգացումները այդ վայրերի նկագմամբ»³²: Վարչապետ Լ. Էշկոլը հավասպիացրել է բոլոր կրոնների դեկավարներին, որ խարայելական կառավարությունը մրադրվել է դրանց կառավարումը հանձնել իրենց՝ կրոնական առաջնորդներին: Շամաձայն օրենքի՝ Խարայել Պետքությունը պարսպավորվել է՝ ապահովելու բոլոր կրոնների հավա-

³¹ <http://www.patriarchia.ru/db/text/535426.html>

³² <http://www.orthodox-jerusalem.ru/publ/1-1-0-71>

դրայալների հասանելիությունը նրանց համար սրբազան վայրեր և պահպանելու այդ վայրերի անվանգությունը և կարգուկանոնը: Օրենքի ընդունման պահից իսրայելական զինվորականները և ոսդիկանները պահպանում են և Տիրոջ Գերեզմանի դամարք և Տարամ աշ-Շարիֆը: Օրենքում, սակայն, անփեսել են սրբազան վայրերի կարգավիճակին և դրանց կառավարմանը վերաբերող բոլոր կարևորագույն հարցերը, չնայած ավելի վաղ իսրայելական դեկավարությունը դրա շուրջ խոսքումներ էր տվել: Չի հսկակեցվել նաև այն իրավիճակը, երբ երկու կրոններ կարող են միաժամանակ հավակնել միևնույն սրբազան վայրին: Նենց այդ հարցն է դարձել առավել հրաժարական կապված 1967 թվականից հետո Տաճարի լեռան պատճառով հրեա-մահմեդական հակամարդության խորացման հետ:

«Նազիրական հուշարձանների պահպանության բնագավառում հարաբերությունները կարգավորելու համար 1978 թ. Իսրայելում ընդունվեց «Նազույն հուշարձանների պահպանության մասին» օրենքը: Այդ ծավալով ոչ մեծ օրենսդրական ակտոն ամբողջովին նվիրված է Իսրայելի հնագիրական ժառանգության պահպանության հետ կապված հարցերի քննարկմանը:

Իսրայելում հնագիրության ժառանգության պահպանության բնագավառում ծագող հարցերը կարգավորում են Մշակույթի և կրթության նախարարության Անդիկ աշխարհի և թանգարանների բաժնի տնօրենը (հետագայում՝ Տնօրեն), Հնագիրական խորհուրդը և Մշակույթի և կրթության նախարարը (հետագայում՝ Նախարար): Հնագիրական հուշարձանների հետ կապված խնդիրների մեծամասնությունը լուծվում է Տնօրենի կողմից: Վիճելի հարցերի դեպքում գործը քննվում է դատարանում կամ Հնագիրական խորհրդի կողմից սպեղծվող Բողոքարկման հանձնաժողովում (հոդված 36): Նախարարը միջամբում է միայն առանձին դեպքերում, երբ գործին առնչվում են նաև նրա գերագեևության շահերը: Հնագիրական ժառանգության լիարժեք պահպանություն իրականացնելը անհնարին է

առանց դաշնային մակարդակի իշխանության կենդրոնացված մարմնի, որը կզբաղվի բացառապես պարմության հուշարձանների պահպանությամբ: Բացի այդ, այդ մարմինը պետք է ունենա իշխանության լիազորություններ՝ հնագիրական հուշարձանների պահպանության բնագավառում ծագող հարաբերությունների կրողմերի վրա իրական ազդեցություն գործելու համար: Խրայելում այդ մարմինը Մշակույթի և կրթության նախարարության Անդիկ աշխարհի և թանգարանների բաժինն է:

Խրայելի օրենսդրությունը հսկակ կարգավորում է հնագիրական հուշարձանների ուսումնասիրությանը (պեղումներին) վերաբերող գործունեությունը: Կա արդունագրերի փրման կարգ, որը իրավունք է փալիս կագարել պեղումներ որոշակի վեղանքում (հոդված 9)³³: Պետք է հարուկ ուշադրություն դարձնել այն փաստին, որ այդ փաստաթերի փրամադրումը չի հակասում հողային սեփականության իրավունքին:

Բացի այդ, Խրայելի հնությունների պահպանության մասին օրենքը նախադրեսում է մի շարք կանոններ և պայմաններ, որոնք պարբաղիր պահպանելու պարագայում պետք է ընթանան պեղումները, հսկակ առանձնացվում են հնագիրական հետազոտությունների մասնակիցների իրավունքները և պարբականությունները: Տնօրենը ոչ միայն հետքում է պեղումներ կագարելիս կանոնների պահպանմանը, այլ նաև սպանում է ամբողջական վեղեկագվություն հետազոտությունների արդյունքների մասին:

Պեղումներ կագարելիս պայմանները խախտելու դեպքում Տնօրենն իրավունք ունի դադարեցնել կամ ընդհանրապես չեղյալ համարել արդունագիրը (հոդված 13):

Խրայելական օրենսդրությունը մանրամասն կարգավորում է հնությունների (անդիկվարիաֆի) հետ վարվելու կարգը: Առանց Տնօրենի հարուկ թույլավության, անդիկվարիաֆը չի կարող վա-

³³ State of Israel Antiquities Law, 5738 – 1978.

ճառվել, արդահանվել կամ փոխանցվել թանգարանին: Ցուրաքանչյուր նման հարց քննարկվում է առանձին (հոդվածներ 15, 21, 22):

Իսրայելի հնությունների պահպանության մասին օրենքը նախադրություն է մի շաբթ խախուտումներ, որոնք առաջացնում են պարախանագրվություն՝ կալանք կամ խոշոր դրամական գուգանք: Պարախանագրվությունն առաջանում է այն դեպքում, երբ խախուտում է օրենքի ցանկացած դրույթը (հոդված 37):

Առանձին պետք է ուշադրություն դարձնել այն փաստին, որը, ըստ իսրայելական օրենսդրության, Նազդիքական խորիրդի հետ նախնական պայմանագրվածությամբ և Կրթության կոմիտեի թույլտվությամբ Նախարարը կարող է կարգադրել՝ չկիրառելու հնությունների պահպանության մասին օրենքը անդիկվարիագի, թանգարանների, պեղումների և անդիկ գարագրների նկարմամբ (հոդված 44):

Այսպիսով, անհրաժեշտության դեպքում հնագիտական հուշարձանների պահպանության մասին օրենսդրությունը կարող է փոփոխվել այդ հարցի վերաբերյալ իրավասու մարմինների կողմից: Բացի այդ, Նախարարը կարող է միցնել կանոններ, որոնք նպաստում են օրենքի կարարմանը, այդ թվում՝ գումար գանձելը արդունագրեր գրամանարկեր դիմաց համար (հոդված 46):

Նախարարը և Բաժնի փնօրենն իրականացնում են լիարժեք հսկողություն հնագիտական հուշարձանների պահպանության մասին օրենսդրության պահպանման նկարմամբ, ինչը նախադրեսում է հետևյալ գործողությունները՝ մուտք ցանկացած հողադրամք, բացի առանձին դիմումների ուղարկությունից պահպանությունից, օրենքի կարումը սպուզելու նպարակով, արգելվ դնելը անդիկ գարագրում գործունեության որոշակի դեսակների նկարմամբ, գրեթե ցանկացած անդիկ գարագրի սեփականազրկումը, անդիկվարիագր թանգարանների հսկողությունից հանելը, ինչպես նաև հնագիտական գրամանարկերի առևտության գործունեության կարգավորումը: Այդպիսի գործողությունների իրականացման համար Բաժնի փնօրենն օժդ-

ված է անհրաժեշտ լիազորություններով (հոդված 40, 32):

Այն դեպքում, եթե ֆիզիկական կամ իրավաբանական անձը Տնօրենի որոշումը համարում է ոչ ճիշդ, նա կարող է խնդրանքով դիմել Բողոքարկման կոմիտե՝ վերանայելու իր հարցը: Բողոքարկման կոմիտեն Հնագիրական խորհրդին կից գործող հարուկ մարմին է, կազմված է երեք անդամից: Նրա հիմնական գործառույթը նման բողոքների քննությունն է: Ըստ օրենքի՝ կոմիտեի անդամներից մեկը պետք է լինի դապավոր (հոդվածներ 34, 35):

Կա Տնօրենի որոշումների հարուկ ցուցակ, ըստ որի կարելի է բողոքարկել: Վյուպիսով, իրականացվում է Տնօրենի գործունեության վերահսկողությունը: Բողոքարկման կոմիտեն հիմնվում է Նախարարի կողմից՝ Հնագիրական խորհրդի հետ միասին: Հնագիրական խորհրդի խնդիրը Նախարարի և Բաժնի փնօրենի խորհրդապվությունն է հնագիրության և անդիկվարիափի թեմայով (հոդված 36):

Այսպիսով, Խորայելում գործում է ինչպես հարուկ օրենսդիր ակպ, որը նվիրված է հնագիրական ժառանգության պահպանության խնդիրներին, այնպես էլ դրա կագարարումը վերահսկող անհրաժեշտ լիազորություններ ունեցող իշխանական մարմին:

Կրոնի հարցերով նախարարությունը, որը ձևավորվել էր կրոնների վերաբերյալ ծագող խնդիրները լուծելու համար (ոչ թե միջամբելու կրոնական համայնքների ներքին գործերին), բացի կրոնական գործերի կառավարումից, լիազորված է հետևելու, որպեսզի հավաքայալների իրավունքները չխախտվեն:

Իսրայելն իր պարզըն է համարում ոչ միայն օրենսդրորեն պաշտպաննելու իր դարաձրում գործող ճանաչված քրիստոնեական կրոնները, այլ նաև իրականացնում է նրանց ֆինանսական աջակցությունը:

Մի շարք նախարարություններ, նրանց թվում՝ Կրթության նախարարությունը, Մշակույթի նախարարությունը և Կրոնի հարցերով նախարարությունը, զբաղվում են պետական ֆինանսավորման բաշխմամբ, որն ուղղված է ճանաչված կրոնական համայնքների դրության

ամրապնդմանը:

Այսպես, սկսած 1960-ական թթ. Խարայելում հայդնաբերվել և վերականգնվել են բազմաթիվ եկեղեցիներ, վանքեր և կրոնական դպրոցներ: Բազմաթիվ սրբավայրեր նույնպես վերականգնվել են կամ վերանորոգվել, և սրբավայրերի հասանելիության ապահովման համար նշանակալից շինարարական աշխատանքներ են իրականացվել պետքական կամ քաղաքապետարանի միջոցների հաշվին (Երուսաղեմի Հին քաղաքում, Կիներեւու լճի մոտ և այլ վայրերում):

Նոյն կաթոլիկ եկեղեցու և բապտիստական եկեղեցու խնդրանքով Մշակույթի և Կրթության նախարարությունները պաշտոնավես ճանաչել են քրիստոնեական դպրոցները և հոգածել են ուսուցչական անձնակազմի աշխատավարձի վճարումները (նշենք, որ աշխարհում այդպիսի գործելակերպ գրեթե չկա):

Սակայն Խարայելում քրիստոնյաների դրությունը միանշանակ չէ: Մի կողմից, Խարայելը համարվում է ժողովրդավարական երկիր, և ձևականորեն քրիստոնյան չափոր է վախենա, որ իր կրոնը դավանելու համար նա կիեվապնդվի, սակայն, մյուս կողմից, քրիստոնյաները հրեական պետությունում պարկանում են մի խմբի, որը կարող է ենթարկվել հետապնդումների և խրբականության: Սա վերաբերում է նաև Խարայելում քրիստոնեական մշակութային ժառանգությանը:

Խարայելում քրիստոնյաների հետապնդումները իին պարմություն ունեն: Դրանք սկսվել են դեռևս Խարայել պետության կազմավորման ժամանակ:

1948 թվականին Երուսաղեմի օպավաման ժամանակ գրավվեցին կամ լրջորեն վնասվեցին շատ քրիստոնեական վանքեր և եկեղեցիներ, որոնք ենթարկվեցին հրեաների նպարակառողջված հրեփակոծություններին և ոմբակոծություններին: Այսպես, մայիսի 14-ին սիոնիստները գրավվեցին սր. Գեորգիի ուղղափառ եկեղեցին: Մայիսի 7-ին ոռոմբն ընկավ սուրբ Կոնսարտանդինի և սուրբ Շեղինեի փաճարի վրա, իսկ նրա բեկորները վնասեցին նույնիսկ մոփակայքում գրնվող

Տիրոջ Գերեզմանի փամարը: Բազմաթիվ հրեփանային արկեր Նայոց պարիհարքության շենքի վրա արձակվեցին սիոնիստների կողմից գրավված Սիոնի լեռան վրա գրնվող թենեղիկոյան վանքից: Նրեփակոծվեցին նաև սուրբ Աքրահամի վանքը, սուրբ Սպիրիտոնի վանքը, Երուսաղեմի ուղղափառ պարիհարքության շենքը, ֆրանցիսկյան վանքը, Լավինական պարիհարքության շենքը, սուրբ Մարկոսի վանքը և շաբ այլ եկեղեցիներ:

1949-1967 թթ. ժամանակաշրջանում խրայելցիները գրավեցին և կողոպտեցին բազմաթիվ վանքեր և եկեղեցիներ: Ամբողջ եկեղեցական գույքը հափշրակվեց, իսկ շենքերը վերածվեցին ռազմական ամրոցների: Կան խրայելական զինվորների կողմից քրիստոնեական գերեզմանները պրծելու, դինամիտով գերեզմանները պայթեցնելու և գերեզմանները փորելու բազմաթիվ փասբեր:

1952 թ. Ծննդյան փոնին խրայելցի զինվորները ոչնչացրեցին Իկրեար քաղաքը, որի բնակչությունը 100%-ով քրիստոնյա էր: Քաղաքի հնագույն եկեղեցին պայթեցվեց: 1953 թ. հոկտեմբերին Գալիլեայում ոչնչացվեց քրիստոնեական Կաֆր-Բուրում քաղաքը, ընդ որում, պայթեցվեցին նրա բոլոր եկեղեցիները:

1954 թ. ապրիլի 16-ին սիոնիստները Նայֆայում հարձակվեցին հոլոն կաթոլիկ գերեզմանի վրա՝ այն պրծելու նպատակով: Նրանք պարում էին գերեզմանների վրա, փորում-հանում էին ոսկորները, ջարդում էին գերեզմանաքարերը: Ոչնչացվեցին 73 քարե կոթողներ և 50 հրեշտակների արձաններ:

1960թ. հունվարի 10-ին 70 յեշիրովնիկներ (հրեական կրոնական ուսումնական հասպարության՝ յեշիվայի սովորողներ) հարձակվեցին Երուսաղեմի ֆիննական քրիստոնեական առաքելության դպրոցի վրա, ջարդեցին այնքեղ բոլոր ապակիները և ծեծեցին դպրոցի պասպոր Ռիսվոր Սանդալին: Վյուպես ուսանողներն արձագանքեցին 1962 թ. դեկտեմբերի 2-ին «Յեղինով Ախարոնով» թերթում հրապարակված հոդվածին, որի հեղինակը կոչ էր անում բողոքի ցույց կազ-

մակերպի՝ մեղադրելով առաքելությանն այն բանում, որ նրա աշխատակիցները հրեաներին քրիստոնեություն են քարոզում:

1967 թ. պագերազմի ընթացքում խրայելցի զինվորները պղծեցին Տիրոջ Գերեզմանի փաձարը: Նրանք ներխուժեցին այնքեղ շների հետ, ծիսեցին փաձարի մեջ: Գրեթե նոյնն էր կապարվում Բեթղեհեմի Ծննդյան վանքում, որը նաև ենթարկվեց հրեւակոծության: Ռամալայում զինվորները կրակեցին եպիսկոպոսարանի՝ կանաց դպրոցի վրա՝ ոչնչացնելով այն և սպանելով նրա բազմաթիվ աշակերպների:

1985 թ. ապրիլի 13-ին խոսհգանները քարեր նեփեցին Երուսաղեմի հնագույն քրիստոնեական համայնքը ներկայացնող ասորիների թափորի վրա, որոնք շարժվում էին դեպի Տաճար՝ դիմավորելու Մրագործ կրակը: Ի դեպ, ասորական վանքի շուրջ գրնվող շրջանը նախկինում պարկանում էր ասորիներին, սակայն 1967 թվականին բոլոր շենքերը բռնազրավվեցին և փոխանցվեցին հրեաներին:

Խրայելում հակաքրիստոնեական ակցիաների մեծամասնությունը կապարվում է իշխանությունների լուր համաձայնությամբ կամ, նույնիսկ, ուղղակի մասնակցությամբ, հաճախ՝ սեփական օրենեքների խախորմամբ: Լայն արձագանք սպացավ Նոր Կրակարանի գրքերի այրումը Օր-Յեզուիտ քաղաքում: Այդ ակցիան անցկացվում էր փոխքաղաքապետ Ուզի Աարոնի ղեկավարությամբ, որին օգնում էին փեղական յեշիվայի սովորողները: Ակցիան 170-րդ հոդվածի ուղղակի խախորման էր, որը նախադեսում է կրոնական գրքեր այրելու համար մինչև 3 տարի ազարֆարկում: Ուզի Աարոնի խոքերով (նա ՇԱՍԿ «Թորային հավաքող սեփարդների համաշխարհային միասնություն» կուսակցության անդամ էր)` այդ սրբապիղծ արարքը պարապահան էր քրիստոնյա քարոզիչների գործունեությանը, որոնք բոլոր ցանկացողներին բաժանել էին Նոր Կրակարաններ: Դրա հետ կապված, Ուզի Աարոնը որոշել էր, իր խոքերով՝ քաղաքացիներին պաշտպանել «ազրեսիվ քրիստոնեական քարոզությունից» և պահանջել էր բնակիչներին հանձնել քրիստոնյաներից սպացած

գրքերը: Միաժամանակ, կրոնական դպրոցի աշակերդներն անցնում էին տնից գուն՝ հավաքելու գրքերը, որոնցից էլ հետագայում խարոյկ կազմեցին: Արոնը գոհ մնաց միջոցառումից և կարծում էր, որ հուդայականների համար խստ ափելի Սուրբ գիրքն այրելը «անցավ հաջողությամբ»³⁴:

Հուդայականների մշտական արարքները քրիստոնյաների դեմ լուրջ խնդիր է: Ուստ Հոգևոր առաքելության պես, վարդապետ Տիխոնի վկայությամբ, երուսաղեմյան հուդայականները խաչ կրող հոգևորականին տեսնելիս սովորաբար թքում են նրա ոդքի դակ, և «լավ է, որ միայն թքում են, պատահել է, որ քարեր են նեփել»: Ամենաշատը նմանօրինակ անպատճառ արարքներից փուժում են քրիստոնյա հայերը, քանի որ նրանք ուղղակի ամենամոդեն են ապրում այն վայրերին, որքեղ այդ ամենը դեղի է ունենում: Վյդ մասին հարցապնդումներ են եղել խորհրդարանում, պահանջվել է խրայելական դադարանից՝ խստացնելու այդպիսի արարքների համար պատիժները: Նման գործողությունների համար պարփիճները մեղմ են՝ միայն փուզանքներ, ընդ որում, քրիստոնյաների վրա թքած հուդայականները հրաժարվում են վճարել փուզանքը՝ համարելով, որ թքելով նրանք կափարում են իրենց կրոնական պարփքը³⁵: Երբեմն ուսրիկանությունը նույնիսկ պաշտպանում է հարձակվողներին և պատասխանադրությունը զցում է փուժած կողմի վրա³⁶:

Խրայելի դպրոցներում հանված է մաթեմատիկական գումարման նշանը, այն փոխարինվել է շրջված Տ գրառով: Ուարքինները դա բացապրում են այն բանով, որ + նշանին սովորած երեխաներին հետագայում դժվար կլինի համոզել՝ թքելու խաչի վրա: Կրթության համակարգի և զանգվածային մշակույթի միջոցով քրիստոնեության նկարմամբ սերմանվում է անբարյացակամ վերաբերմունք, որը հա-

³⁴ Jewish Virtual Library - Christian Communities in Israel

³⁵ Исраэль Шамир: Плюнуть на крест иудеи-ортодоксы считают своим религиозным долгом.

³⁶ <http://rusk.ru/newsdata.php?idar=731490>

ճախ արդացոլվում է խաչակրաց արշավանքների և հակասեմիտական ջարդերի շարանի ներկայացմամբ³⁷: Քիչ չեն նաև այնպիսի դեպքերը, երբ գործադրությունը հեռացնում են իրենց ենթականերին աշխափանքից՝ իմանալով նրանց կրոնի մասին, եթե նրանք նույնիսկ չեն գրաղվել որևէ քարոզչական գործունեությամբ:

Բացի վերոնշվածից, քրիստոնեական ժառանգության համար կա ևս մեկ սպառնալիք. դրանք այն քրիստոնեական կրոնական սրբություններն են, որոնք գտնվում են վիճելի տարածքներում: Ներկայումս դրանք վերահսկվում են Խորայելի կողմից, սակայն ոչ հսկակորեն: Դիմնականում դա վերաբերում է Երուսաղեմի կարգավիճակին: Երուսաղեմի կարգավիճակի հարցը միջազգային իրավունքի ամենաքարդ հարցերից մեկն է, և նրա նշանակությունը չի սահմանափակվում միայն արարա-իշրայելական հակամարդության կողմերով:

Լինելով աշխարհի հնագույն քաղաքներից մեկը, Երուսաղեմը պարզության ամբողջ ընթացքում գտնվել է տարբեր մշակույթների և քաղաքակրթությունների խաչմերուկում: Քաղաքն ունի հսկայական կրոնական նշանակություն միլիոնավոր հավաքացյալների համար աշխարհի բոլոր երկրներում: Շնագույն ժամանակներից բազմաթիվ ճակարտամարդերի ժամանակ տարբեր ժողովուրդներ և միություններ վիճարկել են իրավունքն այդ քաղաքի նկարմամբ, և այդ պարճառով նրա յուրօրինակ նշակութային և կրոնական ժառանգությունն առանձնանում է իր խորությամբ և հարսպությամբ: Ակսած 19-րդ դարից, քաղաքը դարձել է ինչպես իրենքների, այնպես էլ պաղեստինյան արաբների կողմից հավակնությունների առարկա, և բացի կրոնական հանգամանքից, այդ հավակնությունները ծեռք են բերել քաղաքական և տարածքային բնույթ, քանի որ երկու ժողովուրդներն են այդ քաղաքը համարում են իրենց ազգային յուրահավկության և ինքնուրոշման իրավունքի մարմնավորումը:

³⁷ Два процента населения Израиля исповедуют христианство//Православие.ру, 31 октября 2005 г.

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աճում է քիս-
փոնյա աշխարհի հետաքրքրությունը Երուսաղեմի նկարմամբ: 1967
թ. պատերազմն ավարտվեց Իսրայելի կողմից Արևելյան Երուսաղե-
մի և պաղեսարինյան գրանցման ժամանակամբ, դադարեց գո-
յություն ունենալ զինադադարի մասին Համաձայնագրով նախադես-
ված արևելյան և արևմտյան հարգածների միջև բաժանարար գիծը:
Չնայած միջազգային հանրության հակազդմանը, 1980 թ. հուլիսի
29-ին Քնեսեպն ընդունեց այսպես կոչված «Հիմնական օրենքը»
Երուսաղեմի մասին, որով հոչակեց, որ ամրողական և միասնական
Երուսաղեմը Իսրայելի մայրաքաղաքն է: Երուսաղեմում են գրնվում
երկրի նախազամի նսպավայրը, Քնեսեպը, կառավարությունը և գե-
րազույն դարպարանը: Օրենքում նաև նախադեսվել է Սրբազն վայ-
րերի պահպանությունը պղծումից և այն ամենից, ինչը կարող է խան-
գարել գրաբեր կրոնների ներկայացուցիչների մուտքը դեպի սրբա-
զան վայրեր³⁸: Իսրայելի փաստացի վերահսկողությունը քաղաքի
նկարմամբ թույլ դրվեց հսկայական միջոցներ և ջանքեր ներդնել քա-
ղաքի ֆիզիկական ենթակառուցվածքի վերափոխման մեջ և փոխել
նրա բնակչության ժողովրդագրական կազմը: Սակայն Իսրայելի
պահանջները Երուսաղեմի նկարմամբ չեն ճանաչվել միջազգային
հանրության կողմից, որը մերժում է գրանցման դաշտում ռազմա-
կան գործողությունների միջոցով և համարում է, որ այդ գրանցում
կապարվող ցանկացած փոփոխություններ անօրինական են և ան-
վավեր: Մյուս կողմից, պաղեսարինյան անփոփոխ ձգրում են դի-
րել արևելյան Երուսաղեմին՝ այն ապագա անկախ Պաղեսարինյան
պետության մայրաքաղաք հոչակելու համար, որը պետք է ստեղծվի
1967 թվականից բոնազավթված գրանցմանը:

Իսրայելի կառավարությունն այդ գրանցման դրսորում էր որոշ-
ակի զայտագույն Երուսաղեմում ներկայացված եկեղեցիների,

³⁸ Принятый израильским кнессетом закон, провозглашающий Иерусалим столицей Израиля, 29 июля 1980 года; Руководящие указания правительства Израиля, июнь 1996 года.

այդ թվում՝ քրիստոնեական եկեղեցիների նկարմամբ։ Խրայելը ձգ-
փում է պահպանել Երուսաղեմի վարչական կառավարման նորմերը
ՄԱԿ-ի Խնամակալության խորհրդի 1950թ. ապրիլի 4-ի նախագծի
պահանջներին համապարասխան, ըստ որոնց՝ քաղաքը պետք է դե-
կավարի Խնամակալության խորհրդի կողմից նշանակված նահան-
գապետը։ Խրայելական իշխանությունները մշտադիր են փոխան-
ցել նահանգապետի դերը Երուսաղեմի հրեական քաղաքապետա-
րանին։ Երուսաղեմի կրոնական համայնքների և ոչ հրեա բնակչու-
թյան ներկայացուցիչներն ունեն բավականին լուրջ մշտավախություն-
ներ, որ առանց քաղաքի միջազգային կարգավիճակի նրանց իրա-
վունքները չեն կարող պահպանվել և ամբողջովին երաշխավորվել։
Երուսաղեմի հոչակումից հետո քրիստոնեական եկեղեցիների
մեծամասնությունը պահանջեց հարուկ կարգավիճակ գրամադրել
սրբազն վայրերին։ Խրայելում գրեղական քրիստոնեական եկեղե-
ցիների դեկավարների միջև չկա միասնական կարծիք ապագա Երու-
սաղեմի հարցի վերաբերյալ։ Վյապես, 1972 թ. կաթոլիկ եպիսկոպոս-
ները հանդես եկան հայրարարությամբ՝ պահանջելով ճանաչել
Երուսաղեմի միջազգային կարգավիճակը և դադարապետցին Խր-
այելի կողմից քաղաքում գարվող շինարարությունը, միևնույն ժա-
մանակ, ուղղափառ և հայ եկեղեցիների պարիփառքները և անզիկ-
յան արքեպիսկոպոսը գոհունակություն հայքնեցին առկա կարգավի-
ճակից, որն ապահովում է ազար մուտքը դեպի սրբազն վայրեր։
Նրանք անհանգստացած էին, որ Երուսաղեմի միասնական կառա-
վարումը ՄԱԿ-ի վերահսկողությամբ կարող է վերածել քաղաքը Նի-
կոսիայի կամ նախկին Բեռլինի։ Խրայելի իշխանությունները որոշ
ժամանակ զավածություն էին դրսւորում գրեղական համայնքնե-
րի նկարմամբ, սակայն հեփազայում սկսեցին կիրառել կոշփ միջոց-
ներ։ Ժամանակակից ասրբածարանության մեջ հրեական Երուսա-
ղեմի վերածննդի վերաբերյալ կան երկու հակառակ կարծիքներ։ Մի
կողմից, եկեղեցու հայրերի ուսմունքի պահպանողական հետևորդնե-

րը և Ուեֆորմացիայի հիմնադիրները համարում են հրեական Երուսաղեմը անհուսալի անախրոնիզմ, իսկ ժամանակակից Իսրայելը հնագույն Իսրայելի հետ նմանեցնելու ցանկացած փորձ՝ դարպապարփելի: Մյուս կրողմից, մի շարք ասրվածաբաններ կարծում են, որ հրեաները իսկապես ունակ են վերականգնել իրենց քաղաքը, թեև միայն որպես պոդենցիալ քրիստոնյաներ: Այնինչ, քրիստոնեական հանրության շրջանում, դիմուլով Իսրայելի հաջողությունները, կրկին արթնանում է Երուսաղեմի վերականգնման մասին ասրվածաշնչյան մարզաբեռթյան բառացի ըմբռնման գենունցը: Այսպես, տարբեր եկեղեցիներին պարկանող ամերիկյան քրիստոնյաների խումբը կազմավորել է Քրիստոնյաներ կազմակերպությունը, որը հոգ է բանում Իսրայելի մասին և 1971 թ. հանդես է եկել հայրարդությամբ՝ աջակցելով Երուսաղեմի միավորմանը Իսրայելի ինքնիշխանության ներքո: Նմանադիպ հայրարդություն են հրապարակել ավելացական քրիստոնյաների դեկավարները: Ամերիկյան կաթոլիկները, հանդես գալով ճիզվիտների հակախրայելական դիրքորոշման դեմ, աջակցել են Իսրայելին Երուսաղեմի հարցում:

Այս վեճում Մրրազան Վայրերի կարգավիճակի մասին հարցն ունի հագուկ նշանակություն, ինչի հետ կապված, առաջարկություններ են մրցվել դրանց համար միջազգային ռեժիմ հասդարկելու մասին:

Այդ ժամանակներից կարարվել են մի շարք ժողովրդագրական և ֆիզիկական փոփոխություններ, և ինչպես ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան, այնպես էլ Անվտանգության խորհուրդը մի շարք նախագծերում Երուսաղեմի կարգավիճակի փոփոխմանն ուղղված գործողությունները հայրարդել են անվավեր: Մասնավորապես, Անվտանգության խորհրդի 252 (1968) նախագծում նշված է. «Իսրայելի ձեռնարկած բոլոր օրենսդրական և վարչական միջոցառումները և գործողությունները, այդ թվում հողերի և նրանց վրա գրնվող գույքի սեփականազրկումը, որոնք հանգեցնում են Երուսաղեմի իրավական կարգավիճակի փոփոխմանը, անվավեր են և չեն կարող փոփոխել

նրա կարգավիճակը»: Խորհուրդը դիմել է Խսրայելին հարկադրական կոչով՝ «չեղյալ համարել արդեն ընդունած միջոցառումները և անհապաղ հրաժարվել ցանկացած գործողություններ կադրարելուց, որոնք կարող են փոփոխել Երուսաղեմի կարգավիճակը»: Անվտանգության խորհուրդը բազմից հասպարել է այդ երկու դրույթները: Եթե Խսրայելը քայլեր նախաձեռնեց՝ հայդրարարելու միասնական Երուսաղեմը որպես իր մայրաքաղաք, Անվտանգության խորհուրդը 1980 թ. հունիսի 30-ին ընդունեց 476 (1980) նախագիծը, որը եղանակադրական կոչ արեց Խսրայելին՝ զավթիչ պետքությանը, կադրարելու Անվտանգության խորհրդի այդ և նախորդ նախագծերը և անհապաղ հրաժարվելու Երուսաղեմ Սուրբ քաղաքի բնույթին և կարգավիճակին վերաբերող քաղաքականությունից և միջոցառումներից: Եթե Խսրայելը չկապարեց այդ նախագծի պահանջները, Խորհուրդը օգոստոսի 20-ին ընդունեց 478 (1980) նախագիծը, որը եղանակադրական կոչ խոխել են կամ ուղղված են՝ փոխելու քաղաքի կարգավիճակը, համարվում են անվավեր, և կոչ արեց այն պետքություններին, որոնք Երուսաղեմում հիմնել են դիվանագիրական առաքելություններ, դուրս բերել դրանք քաղաքից: Գլխավոր ասամբլեան նույնպես Խսրայելի գործողությունները համարեց միջազգային իրավունքի խախորում, որը չի ազդում հետագայում Ժնևան չորրորդ կոնվենցիայի կիրառման վրա: Վյու դրույթը, որը հասպարվել է Ասամբլեայի կողմից 1980 թ. դեկտեմբերին, հասպարվել է նաև հետագա դրահիներին: 1980-ականներին Երուսաղեմի հարցը քննարկվել է ՄԱԿ-ի նախագծերում ավելի լայն համարեքարում՝ ընդգրկելով ուժի կիրառմամբ դրարածքների ձեռք բերման անթույլագրելության սկզբունքը և 1967 թվականից Խսրայելի բռնազավթած պաղեսպինյան դրամքների նկարմամբ Ժնևան չորրորդ կոնվենցիայի կիրառման հարցը: Եվ Գլխավոր ասամբլեան, և Անվտանգության խորհուրդը ճանաչում են Արևելյան Երուսաղեմը որպես բռնազավթած պաղեսպինյան դրա-

րածքի մի հարված: Միշազգային հանրությունը, մասնավորապես, Անվտանգության խորհուրդը շարունակում են անհանգստությամբ հետևել Պաղեստինի հարցին վերաբերող զարգացումներին. այդ կապակցությամբ Խորհուրդը կարևոր քայլ կափարեց՝ 1990 թ. հոկտեմբերի 12-ին ընդունելով 672 նախագիծն այն բանից հետո, երբ Երուսաղեմում՝ Հարամ-աշ-Շարիֆ շրջանում, որտեղ գտնվում է Ալ-Աքսա մզկիթը՝ նշանակությամբ երրորդ մահմեդական սրբավայրը, որի ունեցան բռնարարքներ: Խորհուրդը, դափապարփերով «հարկապես բռնարարքները, որոնք կափարել են խրայելական անվտանգության ուժերը, և որոնց արյունքում եղան վիրավորներ և սպանվածներ», կոչ արեց Իսրայելին «անհապաղ պահպանել իր իրավական պարփակորությունները և «Պարերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» 1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիայի պարփակորությունները, որոնք կիրառելի են 1967 թվականից Իսրայելի բռնազավթած բոլոր գարածքների նկարմամբ»: Ժնևի չորրորդ կոնվենցիայի կիրառելիությունը Երուսաղեմի նկարմամբ կրկին հասփառվեց Անվտանգության խորհրդի կողմից 1990 թ. դեկտեմբերի 20-ին, երբ Խորհուրդը լուրջ անհանգստություն հայփնեց «1967 թ. Իսրայելի բռնազավթած բոլոր պաղեստինյան գարածքներում, այդ թվում՝ Երուսաղեմում» իրադրության վարացման վերաբերյալ և կոչ արեց Իսրայելին՝ կափարել այդ նախագծի պահանջները: Գլխավոր ասամբլեան ամեն գարի քննարկում է Երուսաղեմի հարցը: 2006 թ. դեկտեմբերի 1-ին 61-րդ նարաջանում ընդունված 61/26 նախագծում Ասամբլեան սահմանեց, որ Իսրայելի ձեռնարկած բոլոր օրենսդրական և վարչական միջոցառումները և գործողությունները, որոնք փոփոխել են կամ նպարագանությունը Սուրբ քաղաքի բնույթը և կարգավիճակը, մասնավորապես, այսպես կոչված Շիմնական օրենքը և Երուսաղեմը Իսրայելի մայրաքաղաք հայտարարելը, անվավեր են: Ասամբլեան նշեց, որ «Երուսաղեմ քաղաքի հարցի համակողմանի, արդարացի և երկարա-

ժամկետ լուծման ժամանակ պետք է հաշվի առնվեն ինչպես պարես-
փինյան կողմի, այնպես էլ իսրայելական կողմի օրինական մրահո-
գությունները, հարցի լուծումը պետք է ներառի, միջազգային մակար-
դակով երաշխավորված, քաղաքի բնակիչների կրոնի և խղճի ազա-
գության ապահովման դրույթները, ինչպես նաև բոլոր կրոնների և
ազգությունների ներկայացուցիչների մշտական, ազադ և առանց
խոշոնդուրների մուտքը դեպի սրբազն վայրեր»:

Ծոցում պարերազմի ավարտից հետո փոխվեց միջազգային դրու-
թյունը և ավարտվեց «սառը պարերազմը», ինչից հետո հնարավոր
եղավ 1991 թ. հոկտեմբերին Մադրիդի խաղաղ կարգավորման
խորհրդաժողովում կողմերի միջև սկսել պաշտոնական բանակցու-
թյուններ, որին 1993 թ. սեպտեմբերին հետևեց պարմական քե-
կում՝ Խարայելի և ՊԱԿ-ի (Պաղեստինի ազարագրության կազմա-
կերպության) կառավարությունների միջև փոխադարձ ճանաչումը և
սկզբունքների Հռչակագրի սպորագրումը: Հռչակագրով և դրան
հետևած համաձայնագրերով 1994 թվականին իսրայելական զորքե-
րը դուրս բերվեցին Գազայի հարվածից և Յերիխոնի շրջանից,
սպեղծվեց պաղեստինյան ոսպիկանություն, մի շարք պարտականու-
թյուններ փոխանցվեցին Պաղեստինյան մարմնին, 1996 թ. հունվա-
րին անցկացվեցին օրենսդիր Խորհրդի և Մարմնի նախագահի ընդ-
րություններ, իսկ այնուհետու իսրայելական ուժերը մի շարք քաղաք-
ներից և գյուղերից վերադասավորվեցին Արևմուտքան ափի շրջանում:
Այդ համաձայնագրերը նախադասում են պաղեստինյան ինքնակա-
ռավարման հնգամյա (սկսած 1994 թ. մայիսից) անցումային շրջան,
ինչը համահունչ է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 242 (1967) և
338 (1973) նախագծերի հիման վրա անցկացվող մշտական կարգա-
վորման դրույթներին: Երուսաղմի հարցը և վերաբնակիչների հարցը
վերաբերում են այն հարցերին, որոնք հետաձգվել են մինչև մշտական
կարգավիճակի մասին բանակցությունները, որոնք, ըստ Հռչակագրի,
պետք է սկսվեն անցումային շրջանի երրորդ դարձու սկզբից ոչ ուշ,

այսինքն՝ 1996 թ. մայիսից ոչ ուշ³⁹: 1996 թ. մայիսի 5-ին, առաջին հանդիպումից և հետագայում խաղաղ գործընթացի մի շարք ձգձգումներից հետո, համաձայն Իսրայելի և ՄԱԿ-ի միջև 1997 թ. հունվարի 15-ին ստորագրված Նեվրոնի և այլ հարցերի շուրջ համաձայնագրի, բանակցությունները պեսք է սկսվելին 1997 թ. մարտի 15-ին⁴⁰: Սակայն դրանք կրկին հետաձգվեցին գեղում իրավիճակի վարթարացման և կողմերի միջև աճող դաշտածավական պարագաների պարզաբնական:

1997 թ. մարտին երկու անգամ Անվտանգության խորհրդում և Գլխավոր ասամբլեայում քննարկվեց Զերել-արու-Գնեյմ լեռան վրա պլանավորված Նար-Դոմ բնակավայրում 6500 միավոր բնակարանների շինարարության հարցը: Խորհրդի նիստերին առաջին փուլում բոլոր երրոյթ ունեցողները հանդես եկան Իսրայելի այդ բնակավայրերը կառուցելու որոշման դեմ: Սակայն Պորֆուգալիայի, Ֆրանսիայի, Միացյալ Թագավորության և Շվեդիայի ներկայացրած որոշման նախագիծը, որպես պարունակվում էր կոչ Իսրայելին՝ ձեռնպահ մնալ բնակավայրերի հետ կապված գործունեությունից և պահպանել Ժնևյան կոնվենցիայի դրույթները, չընդունվեց, քանի որ Խորհրդի մշղական անդամներից մեկը դեմ քվեարկեց: Գլխավոր ասամբլեան, որը հրավիրվել էր այդ հարցը քննարկելու համար, 130 կողմ (2 դեմ և 2 ձեռնպահ) ձայներով ընդունեց նմանադիպ նախագիծ, որի հեղինակը 57 երկիր էր: Շինարարությունը սկսվելուց հետո, դաշտածավագրանում լարվածության ուժեղացման պայմաններում, Խորհուրդը հրավիրեց երկրորդ նիստը և կրկին չկարողացավ այդ հարցի վերաբերյալ նախագիծ ընդունել, քանի որ Խորհրդի մշղական անդամներից մեկը դեմ քվեարկեց:

Գլխավոր ասամբլեան, հրավիրելով իր դաշտաներորդ արքակարգ հարուկ նստաշրջանը, դարպագարեց Իսրայելի կողմից իրակա-

³⁹ Декларация принципов о временных мерах по самоуправлению, статьи I и V (A/48/486-S/26560).

⁴⁰ Protocol concerning the Redeployment in Hebron, 15 January 1997, Israel Information Service, www.Israel.org

նացվող շինարարությունը Զերել-արու-Գնեյմ լեռան վրա, պահանջեց դադարեցնել շինարարությունը և հասպագեց, որ Իսրայելի կողմից ձեռնարկված բոլոր միջոցառումները և գործողությունները՝ ուղղված Երուսաղեմի բնույթի, իրավական կարգավիճակի և ժողովրդագրական կազմի փոփոխությանը, համարվում են անվավեր և չունեն որևէ իրավաբանական ուժ⁴¹: Արբակարգ նստաշրջանը վերսկսվեց 1997 թ. հուլիսին՝ Իսրայելի կողմից նոր բնակավայրի շինարարությունը դադարեցնելուց և Գլխավոր քարտուղարի հետ համագործակցությունից հրաժարվելուց հետո:

131 կողմ (2 դեմ և 14 ձեռնպահ) ձայներով ընդունված նախագծով Ասամբլեան կրկին հասպագեց, որ «Իսրայելի բոլոր անօրինական գործողությունները բռնազավթված Արևելյան Երուսաղեմում ... չեն կարող ճանաչվել, անկախ վաղեմության ժամկետից», կոչ արեց ընդունել միջազգային միջոցներ՝ ուղղված բնակավայրերի դեմ, և առաջարկեց Ժնևյան կրնվենցիայի անդամ-պետքություններին՝ հրավիրելու խորհրդաժողով՝ բռնազավթված պաղեստինյան բարածքներում, ներառյալ Երուսաղեմում, նրա դրույթների կարարման ապահովմանն ուղղված միջոցների վերաբերյալ հարցով⁴²:

Անվանգության խորհրդի, Գլխավոր ասամբլեայի և ՄԱԿ-ի այլ մարմինների ջանքերը՝ ուղղված Ժնևյան չորրորդ կրնվենցիայի դրույթների պահպանմանը և բռնզավթման դադարեցմանը, լրացվեցին մի շարք միջոցառումներով, որոնց նպարակն էր՝ պահպանելու Սրբազն վայրերը, պարմական հուշարձանները և Երուսաղեմի Շին քաղաքի բնույթը: 1968 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր խորհրդաժողովը հասպագեց «Երուսաղեմ քաղաքի հին հարվածի, հարկապես նրա սրբազն վայրերի, բացառիկ մշակութային նշանակությունը ոչ

⁴¹ S/PV.3536, S/PV.3538 и проект резолюции S/1195/394; S/PV.3745, S/PV.3747 и проект резолюции S/1997/199; A/51/PV.93 и резолюция 51/223 Генеральной Ассамблее; S/PV.3756 и проект резолюции S/1997/241; A/RES/ES-10/2 и A/ES-10/PV.1-3.

⁴² Резолюция A/RES/ES-10/3 Генеральной Ассамблее; доклад Генерального секретаря A/ES-10/6-S/1997/494.

միայն շահագրգիռ պեղությունների, այլև համայն մարդկության համար՝ նրա գեղավերսպական, պարմական և կրոնական արժեվորմամբ»: Գլխավոր ասամբլեայի 2253 (ES-V) նախագծին համապարախան՝ Ասամբլեան դիմում է Խրայելին հարկադրական միջազգային կոչով՝ «մանրակրկիք կերպով պահպանել բոլոր պարմական վայրերը, շենքերը, հուշարձանները և մշակութային արժեքները, մասնավորապես՝ Երուսաղեմի հին հարվածում» և «ձեռնպահ մնալ ցանկացած պեղումներից, այդ արժեքների գեղափոխումից և դրանց բնորոշ գենսքը կամ մշակութային կամ պարմական բնույթը փոփոխելուց»⁴³: ՅՈՒՆԻՍԿՕ-ի Գործադիր խորհուրդը կոչ արեց ապահովել ՅՈՒՆԻՍԿՕ-ի ներկայությունը Երուսաղեմում՝ այդ և այլ նախագծերի պահպանմանը հերքելու համար⁴⁴:

«Եփազա նախագծերում Գլխավոր խորհրդաժողովն ավելի հասպարակամորեն ընդգծեց Քաղաքի մշակութային, պարմական և կրոնական ժառանգությունն ամբողջությամբ պահպանելու անհրաժեշտությունը որպես մարդկության համընդհանուր ժառանգության մի մաս: Խորհրդաժողովը նաև դարձապարփեց Խրայելին հնագիրական պեղումներ և այլ գործողություններ կարարելու համար, որոնք ուղղված են Երուսաղեմի պարմական և մշակութային գենսքի փոփոխությանը, որոնք հակասում են ՅՈՒՆԻՍԿՕ-ի Կանոնադրությանը և 1954 թ. ռազմական հակամարդության դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին Կոնվենցիայի նպարակներին»⁴⁵:

Այդ Կոնվենցիային համապարտասխան՝ կողմերը պարզավորվում են հարգել իրենց սեփական դարաձքներում, ինչպես նաև մյուս կողմի դարաձքներում գրնվող մշակութային արժեքները, «արգելե-

⁴³ Генеральная конференция ЮНЕСКО, пятнадцатая сессия, резолюция 3.343 от 20 ноября 1968 года.

⁴⁴ Исполнительный совет ЮНЕСКО, восемьдесят восьмая сессия, решение 4.3.1.

⁴⁵ Генеральная конференция ЮНЕСКО, семнадцатая сессия, резолюция 3.422 от 17 ноября 1972 года.

⁴⁶ Конвенция о защите культурных ценностей в случае вооруженного конфликта, Гаага, 14 мая 1954 года, United Nations, Treaty Series, vol. 249, pp. 240-365.

լով այդ արժեքների և նրանց անմիջականորեն կից հողագրածքների օգբագործումն այնպիսի նպագրակներով, որոնք կարող են հանգեցնել այդ արժեքների քայլայմանը կամ վնասմանը ռազմական հակամարդության դեպքում, և խուսափել որևէ թշնամական գործողությունից՝ ուղղված այդ արժեքներին», և պարփակորվում են «արգելել, կանխարգելել, և, եթե անհրաժեշտ է, կանխել մշակութային արժեքների ցանկացած գողություն, կողոպուր կամ անօրինական յուրացման գործողություն ցանկացած ձևով, ինչպես նաև վանդալիզմի ցանկացած գործողություն նշված արժեքների նկարմամբ» (հոդված 4): Բացի այդ, զավթիչ պերությունը «պետք է, հնարավորության սահմաններում, աջակցի բռնազավթված տարածքում իրավասու ազգային իշխանությունների ջանքերը՝ մշակութային արժեքները պաշտպանելու և պահպանելու համար» կամ պետք է ինքը ձեռնարկի անհրաժեշտ միջոցառումներ, եթե իրավասու ազգային իշխանությունները չեն կարողանում դա պահովել (հոդված 5): Այդ Կոնվենցիայի նպագրակների համար մշակութային արժեքներ են համարվում «շարժական կամ անշարժ արժեքները, որոնք ունեն մեծ նշանակություն յուրաքանչյուր ժողովրդի մշակութային ժառանգության համար», կրոնական կամ աշխարհիկ արժեքները, ներառյալ շենքերը, հուշարձանները, հնագիրական վայրերը, արվեստի գործերը, գրքերը և այլ օբյեկտները (հոդված 1): Կոնվենցիան ՅՈՒՆԵՍԿՕ-ին հարուկ պարասիստափություն է ընձեռում այն իրականացնելու համար:

Իսրայելի կառավարության հետ ունեցած պայմանավորվածությամբ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր քարտուղարը պարբերաբար իր անձնական ներկայացուցչին ուղարկում է Երուսաղեմ՝ Իսրայելի իշխանությունների մարմինների պաշտոնագործ անձանց, մահմեդական վակֆի պահապանների և քրիստոնեական կրոնական ներկայացուցիչների հետ խորհրդարվություններ վարելու համար, ինչպես նաև մշակութային և կրոնական ժառանգության վիճակի և դրանց պահպանության և վերականգնման համար անհրաժեշտ միջոցա-

ռումներ անցկացնելու մասին գեկույց ներկայացնելու համար: Անձնական ներկայացուցիչը դեղում սպուգում է փաստերը՝ հաշվի առնելով կառավարություններից կամ այլ աղբյուրներից Գլխավոր քարտուղարին ուղղված բողոքները: Նա նաև մանրակրկիվ վերլուծում է Իսրայելի քաղաղաքականության և գործելակերպի ազդեցությունը Քաղաքի ժառանգության պահպանման վրա, մասնավորապես՝ փների քանդումը, քաղաքային զարգացման, հողերի բռնագրավման և բնակայրեր սպեղծելու նախագծերը⁴⁷:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի աշխատանքն այդ ուղղությամբ նոր ազդակ սպացավ, երբ Երուսաղեմի Դին քաղաքը և նրա պատերը ընդգրկվեցին 1981 թ. Համաշխարհային ժառանգության ցուցակում և 1982 թ. Վրանզի փակ գրնչող Համաշխարհային ժառանգության օրյեկտների ցուցակում՝ 1972 թ. Համաշխարհային մշակութային և բնության ժառանգության պահպանության մասին Կոնվենցիայի համապերսուցում: Այդ Կոնվենցիայի շրջանակներում կարող է կազմակերպվել միջազգային օգնություն՝ առանձին վայրերի պահպանության և վերականգնման նպարակներով: Վերջին ժամանակներս սկսել է մի հերազդություն, որի նպարակն է գույքագրել մշակութային արժեքները, առաջնահերթ բնույթ փալ նման նախագծերին: Նշանակվել են ճանաչված միջազգային փորձագեներներ, որոնք պետք է դիմումներ կազմակերպությունների հուշարձանների (ինչպես մահմեդական, այնպես էլ քրիստոնեական) վիճակը դեղերում և առաջարկություններ մոդելներ դրանց պահպանության կամ վերականգնման համար՝ համապարասիսան կրոնական մարմինների հետ համագործակցությամբ⁴⁸: 2007 թ. ապրիլին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր փորենի կողմից Երուսա-

⁴⁷ Следующие доклады Генерального директора ЮНЕСКО по вопросу об Иерусалиме и осуществлении резолюций Генеральной конференции: 21C/7; 22C/90; 23C/15; 24C/15; 25C/14; 26C/14.

⁴⁸ Информация о проектах ЮНЕСКО содержится в докладах Генерального директора двадцать седьмой и двадцать восьмой сессиям Генеральной конференции (27C/19 и Add.; и 28C/19).

դեմ ուղարկված գեխսնիկական հանձնաժողովի գեկույցից հետո, որն ուղարկվել էր Դին քաղաք՝ Խարայելի իշխանությունների կողմից անցկացվող վերականգնողական և հնագիտական աշխաբանքների ծավալը գնահատելու նպարակով, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գործադիր կոմիտեն որոշում ընդունեց հասպարել Երուսաղեմի Դին քաղաքի բացառիկ համաշխարհային նշանակությունը և հասպարեց համաշխարհային ժառանգության այդ օբյեկտի պաշտպանության և պահպանության անհրաժեշտությունը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի խորհրդի նախագահը նշեց, որ խարայեցիները և պաղեսադինցիներն առաջին անգամ համապետ աշխատեցին՝ ապահովելու Երուսաղեմի պաշտպանությունը որպես համայն մարդկությանը պարկանող վրանգված համաշխարհային ժառանգության օբյեկտ և համագործակցելու՝ այդ կարևորագույն և շափ բարդ խնդրի վերաբերյալ փոխհամաձայնության հասնելու նպարակով:

Քաղաքի կարգավիճակի հարցի չկարգավորված լինելու և արաբախարայելական հակամարդության պարճառով հայ համայնքը այսօր հայրնվել է ոչ նպաստավոր դրության մեջ: Հայ համայնքի նկարմամբ գրանցվել են մի քանի անհանգստացնող դեպքեր, մասնավորապես՝ փորձեր են արվել այս կամ այն ձևով յուրացնելու հայոց պարրիարքության սեփականությունը: Երուսաղեմում՝ Դին քաղաքում հայերի գների և հողագործածքների մոտ գգնվելը հրեաների նոր թաղամասերին դարձել է Հայոց պարրիարքության և Խարայելի կառավարության միջև գրարածայնությունների և վեճերի պատճառ: Վյսես, 1982 թ. խարայելական իշխանությունները հայրնեցին, որ մբադիր են գնել Հայոց պարրիարքությանը պարկանող հողագործքների մի մասը: Պարրիարքին այս ժամանակ փոխարինող արքեպիսկոպոս Գարեգին Ղազանչյանը, որպեսզի պահպանի սեփականության անձեռնմխելիությունը, մերժեց խարայելական իշխանություններին⁴⁹:

⁴⁹ R. Hovhannisian. The Ebb and Flow of the Armenian Minority in the Arab Middle East - The Middle East Journal. Vol. 25, 1974, N1, p. 19-20.

Քանի որ Երուսաղեմի հայկական հազրվածի սեփականությունը պարկանում է նրա միակ գիրոջը՝ Շայոց պատրիարքությանը, ապա նրա բնակիչների՝ գնորինելու և կառուցելու իրավունքները երաշխավորված են:

Ըստ հնում սահմանված կարգի՝ Շայոց պատրիարքությունը գնորինում է ոչ միայն Եկեղեցապատկան հողերը, այլ նաև սուրբ Հակոբյանց Եկեղեցու պատերի ներսում ապրող մարդկանց գրները: Շայոց պատրիարքությունը նրանց գրամադրում է բնակության իրավունք, որը փոխանցվում է սերնդից սերունդ:

Շայոց պատրիարքության գոյության իրավական հիմնադրույթները դրվել են դեռևս 7-րդ դարում և նկատելիորեն ընդլայնվել են 14-րդ դարում՝ մամլության սուլթան Նասր Մուհամեդի օրոք: Շայոց պատրիարքությունը ճանաչվել է ոչ միայն որպես անշարժ գույքի խոշոր սեփականապեր, այլ նաև որպես քաղաքական սուբյեկտ, որն իրավունք ունի «սրբազն վայրերում» հանդես գալ որպես հայ Եկեղեցու շահերի խնամակալ: Ենց այդ հանգամանքը հիմք հանդիսացավ Շայոց պատրիարքության համար՝ մերժելու օսմանյան իշխանությունների պահանջները՝ փոխարինել նրա կարգավիճակը «միլլեթ» համակարգի սկզբունքներով⁵⁰:

Պատրիարքը՝ Երուսաղեմի հայ Եկեղեցու ղեկավարը, նոյնպես ունի որոշ գործառույթներ, որոնք արդյունք են խրայելական կառավարության կողմից ճանաչված «սրբազն վայրերին» վերաբերող սահմանումներին⁵¹: Երուսաղեմի մյուս քրիստոնեական Եկեղեցիների ներկայացուցությունների հետ Շայոց պատրիարքությունն օգտվում է հարկային արքունություններից որպես կազմակերպություն, որը Եկամուք սպանալու նպագակ չի հետապնդում: Պատրիարքության ղեկավարը օգտվում է ներկայացուցչական իրավունքներից և արքունություններից: Նա իրավասու է ներկայացնել և հոգևորականությու-

⁵⁰ D. Tsimhoni. Ակազ. սոչ., ս. 354.

⁵¹ V. Azarya. Ակազ. սոչ., ս. 124.

նը, և Երուսաղեմի ամբողջ հայ բնակչությունը պետքական և կառավարական մարմիններում: «Սրբազն Վայրերի» պահապանների՝ կաթոլիկ, ուղղափառ և հայոց պատրիարքարանների իրավունքները սահմանվել են 1856 թ. Փարիզի խաղաղության խորհրդաժողովում, 1876 թ. Բեռլինի համաժողովում և հասբարվել են 1919 թ. Վերսալի խաղաղության խորհրդաժողովում: Հայոց պատրիարքությանն է դարեր շարունակ պատրիարքանել Փրկչի Գերեզմանի պահապանի դերը: Բացի այդ, սուրբ Տակորյանց միաբանության բնակիչներն ունեն մեծ հեղինակություն ոչ միայն Երուսաղեմում, այլև ամբողջ քրիստոնեական աշխարհում: Հայոց պատրիարքության հողերի գավթումը Խսրայելի կողմից առաջին փորձը չէ, երբ ճնշում է գործադրվում գեղի հայ բնակչության վրա: Խսրայելի իշխանությունները չնշին հնարավորության դեպքում խոչընդունակում են Հայոց պատրիարքության կամ Հայկական թաղամասի պարագրում անցկացվող վերանորոգման և շինարարական աշխարհանքներին: Նպագակն ակնհայտ է՝ սպիտել հայերին վաճառել նրանց պատրիարքանող հողերը: Այդ քաղաքականության հետևանքով ասդիմանաբար ավելանում է Երուսաղեմի հրեական թաղամասը և ապահովվում է այդպես ապրող հրեաների անվտանգությունը:

Խսրայելի իշխանությունները հնդորեն օգտվում են քրիստոնյաների (ուղղափառ հույների և հայերի) հակասություններից, և «Երուսաղեմյան կծիկը» քանդելու գործում այդ կրոնական համայնքների միջև հականարդությունը օգտագործում են որպես միջոց իրենց մարդագարական և ռազմավարական խնդիրները լուծելու համար:

Երուսաղեմի կարգավիճակի խնդիրը աշխարհի ամենացավոր խնդիրներից մեկն է: Այն ներառում է երեք հիմնական հարց՝ Արևելյան Երուսաղեմի վերաբերձր պաղեստինյան պետությանը, քաղաքի կրոնական նշանակության ճանաչումը և բոլոր կրոնների ներկայացուցիչների իրավունքների ճանաչումը: Երուսաղեմի կարգավիճակի մասին 2000 թ. Քեմապ Դսիդում (ԱՄՆ) ԱՄՆ նախագահ Բիլ Քլին-

թռնի միջնորդությամբ Պաղեսպինյան շարժման առաջնորդ Արա-Փաթի և Խորայելի Վարչապետ Էհուդ Բարաքի միջև անցկացված բա-նակցություններում առաջարկվեց, որ Շին քաղաքը բաժանվի երկու հարվածի՝ խրայելական վերահսկողություն սահմանվի հրեական և հայկական թաղամասերի նկազմամբ և պաղեսպինյան վերահսկո-ղություն՝ քրիստոնեական և մահմեդական թաղամասերի նկազ-մամբ: Երուսաղեմի քրիստոնեական՝ հայ, ուղղափառ և կաթոլիկ եկեղեցիների ղեկավարները, ովքեր գեղեկացված չեն այդ բանակ-ցությունների մասին, իրենց բողոքն արդահայփեցին: Նրանք Բի Քիլնթոնին, Էհուդ Բարաքին և Արաֆաթին նամակ ուղարկեցին՝ առաջարկելով քննարկման հրավիրել եկեղեցիների ներկայացուցիչ-ներին: Եկեղեցիների առաջնորդների պահանջներից մեկը Երուսա-ղեմում բոլոր երեք քրիստոնեական եկեղեցիների «հավաքական ներ-կայության» ճանաչումն էր: Նրանք, մասնավորապես, ընդգծում էին, որ Շին քաղաքի քրիստոնեական և հայկական թաղամասերը ճանա-չում են որպես հարևան և անբաժանելի հարվածներ: Քրիստոնեա-կան եկեղեցիների առաջնորդները պահանջեցին իրենց իրավունքնե-րի միջազգային երաշխիքներ, իրենց հողերի պաշտպանություն (քրիստոնյաներին ընդհանուր առմամբ պարկանում է Շին քաղաքի գործադրի մոփ 35%-ը): Համաձայն վերջին գեղեկությունների՝ բա-նակցությունների վերջին փոլուս ներկայացվեց նոր գարբերակ՝ պաղեսպինյան վերահսկողություն հայ հարվածի նկազմամբ: Այս գարբերակը պետք է մանրակրկիդ և համակողմանի ուսումնասիր-վի: Երուսաղեմի հայ համայնքն ունի իր կարծիքը քաղաքի կարգա-վիճակի վերաբերյալ: Այդ կարծիքի համաձայն՝ համայնքի առաջին ընդունված 1947 թ. նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա-յի հասպարագած նախագիծն է. ճանաչել Երուսաղեմի միջազգային կարգավիճակը՝ ՄԱԿ-ի վերահսկողությամբ: Մյուս գարբերակը, որն առաջարկում է հայ համայնքը, վերաբերում է Երուսաղեմի հա-մագեղ, խրայելական-պաղեսպինյան կառավարմանը՝ միջազգա-

յին երաշխիքներով (միջազգային դադարանի կամ արքիվրաժի առկայությամբ, որքեղ կարող են դիմել քրիստոնյաները՝ իշխանությունների հետ անհամաձայնության դեպքում):

Քենաց Դսիդիր հետո վերսկսվեց արարա-իսրայելական հակամարդությունը, ինչը ցույց տվեց, որ Երուսաղեմի հագուկ միջազգային կարգավիճակի հարցը դեռևս սպասում է իր լուծմանը:

Վերոնշված փաստերի և վերջին իրադարձությունների պայմաններում (Պարֆիարքության հողերի բռնազավթումը Իսրայելի Պաշտպանության նախարարության կողմից, ինչն իսրայելական կառավարության կողմից փաստորեն մի փորձ է՝ իրականացնելու իր նպագակները, որն արփահայքել է Իսրայելի վարչապետ Է. Բարարը Քենաց Դսիդիր վերջին բանակցությունների ժամանակ) շար կարևոր է հայկական սփյուռքի դերը: Հայաստանի Հանրապետությունը, սփյուռքը և Հայ առաքելական եկեղեցին պետք է միավորեն իրենց ջանքերը և պաշտպանեն հայրենակիցների շահերը, ընդ որում, ոչ միայն կառավարական, այլև՝ հանրային մակարդակով: Սա իսրայելական իշխանությունների կողմից հայ համայնքին հալածելու առաջին դեպքը չէ, որոնք ամեն կերպ խոցընդուներ են հարուցում հայ համայնքին և Պարֆիարքությանը, մասնավորապես, երբ Հայկական թաղամասում անհրաժեշտ է վերականգնել իին շենքերը և կառուցել նոր շենքեր: Իսրայելի այդ գործողությունների նպագակն է դուրս մղել հայ բնակչությանը, ձեռք բերել Պարֆիարքությանը և մասնավոր անձանց պարկանող դրամածքները, ավելացնել քաղաքում իրենց դրամածքները և ապահովել հրեական թաղամասի անվտանգությունը:

Կան մի քանի պատճառներ, որոնք, հայկապես Հայոց պարփաքության հողերը, առավել գայթակղում են Իսրայելին: Առաջին՝ հայկական թաղամասի կենդրում է գրնվում բոլոր հուդայականների համար սրբազն Սիոն լեռը: Երկրորդ՝ հենց Հայոց պարփաքության փողոցով և Արարագ խաչմերուկով է անցնում իրեա ուխ-

դասապարհն արևմույան Երուսաղեմից դեպի Լացի պատ: Երրորդ՝ Խորայելը ձգվում է վերահսկել Հայկական թաղամասը, քանի որ դա ավելի հեշտ է, քան պահանջներ ներկայացնելը մահմեդական և քրիստոնյա հարվածներին, որպես արաբներ են ընակվում: 2009 թվականին Խորայելի Շողային վարչությունը Արևելյան Երուսաղեմում անցկացրեց մարդահավաք և հողափարածքների գրանցում: 1967 թ. հետո դա առաջին փորձն էր՝ կարգուկանոն մყցնելու անշարժ գույքի և հողափարածքների իրավունքներին առնչվող հարցերում: Մասնագետները պարզեցին, որ քաղաքի հին հարվածի հողափարածքների նկարելի մասը պաշտոնապես գրանցված չէ: Այսինքն՝ հոդի փաստացի սեփականափերերը իրենց սեփականության իրավունքի մասին փաստաթյուր չունեն: Բոլոր վիճելի հողափարածքները գրնվում են մահմեդական հարվածում, որպեսից ժամանակին թուրքերը և արաբները դուրս են մղել հրեաներին: Եթե Խորայելի ղեկավարությունը կարողանա ապացուցել, որ մահմեդական թաղամասի հոդերի գրեթե կեսը «փիրազուրկ է», ապա դա կդառնա նրա գլխավոր հաղթաթուղթը արաբների հետ բանակցությունների ընթացքում: Ըստ Երևանյահին, խորայելական կողմը խոսդանում է Մահմուդ Աքասին քարձրացնել մահմեդական թաղամասի վիճելի գրածքների հարցը՝ փոխանակելով այն հայկական թաղամասի նկարմամբ պահանջներից հրաժարվելու հետ: Ընդ որում, այդ հարցի վերաբերյալ հայերի կարծիքը ոչ ոք չի պարբռասրվում հարցնել:

Քենապ Դևիդի պլանը ոչ միայն պարզապես արհամարհում է Հայեկենցու ղեկավարների կարծիքը: Այդ պլանը, ըստ Էռլյան, հայկական Երուսաղեմի լիակատար և վերջնական ոչնչացման պլան է: Դժվար չէ պարկերացնել, թե ինչ կմնար Երուսաղեմյան հայերի հազարամյա ժառանգությունից, եթե 2000 թվականին Յասեր Արաֆաթը չիրաժարվեր հայկական թաղամասը բաժանելու գաղափարից: Նա հրապարակավ հայփարարեց, որ այն այսուհետ կարող են անվանել

«Արաֆաթյան», քանի որ նա «ոչ մի դեպքում չի դավաճանի հայեցին»: Եթե պաղեսափինյան առաջնորդները ժամանակ առ ժամանակ փորձեր են կատարում՝ սրբանալու Նայոց պարրիաքքության աջակցությունը, ապա Խարայելի կառավարությունը խուսափում է այդ թեմայի շուրջ խոսակցություններից: Նայկական թաղամասի պարկանելության հարցն առանց հայերի մասնակցության վճռելու փորձերը ոչ միայն անբարոյական են, այլև՝ անօրինական: Առաքելական եկեղեցին ունի բոլոր հիմքերը՝ հավակնելու մերձավորարևելյան կարգավորման շուրջ բանակցությունների լիիրավ մասնակցի դերին: Սակայն մի բան պարզ է՝ այդ կծիկի քանդման մեջ դարրեր մակարդակներում իր լուման պեսքը է ունենալ նաև հայկական կողմը: ՌԴ դիրքորոշումը Պարրիաքքության և հայկական թաղամասի հարցում պայմանավորված է երեք հիմնական գործոններով՝ արժեքանական, քաղաքական և իրավական:

Վրժեքանական հանգամանքն այն է, որ Հայ առաքելական եկեղեցին, որը ներկա է Երուսաղեմում 5-6-րդ դարերից և ունի Տիրոջ Գերեզմանի «պահապանի» պարվավոր իրավունք, ունի հսկայական հեղինակություն քրիստոնեական աշխարհում և բոլոր հայերի համար հոգևոր լիցքի աղբյուր է: Բացի այդ, սուրբ Հակոբյանց միաբանությունը ամենահեղինակավոր և հնագույն միաբանություններից է ոչ միայն Երուսաղեմում, այլ նաև ամբողջ քրիստոնյա աշխարհում: Քաղաքական հանգամանքն այն է, որ Հայասպանի Հանրապետությունը շահագրգրված է հակամարդության կարգավորմամբ, քանի որ պարասիստագու է իր հայրենակիցների և ՀԱԵ Պարրիաքքության համար: Ենթաքարար, Երուսաղեմի հայ համայնքի և Պարրիաքքության համար ձեռնվոր է հակամարդության խաղաղ և վերջնական լուծումը, ինչի հետևանքով կդադարի հայերի արդագաղթը Երուսաղեմից և կվերանա ՀԱԵ-ն պարկանող հողերը կորցնելու վրանզը, որոնք հայ ժողովրդի հոգևոր և մշակութային ժառանգությունն են: Հայասպանի Հանրապետության համար ամենաշահավե-

վր Երուսաղեմին միջազգային կարգավիճակ շնորհելն է: Դա անվտանգության երաշխիք կլինի քաղաքի բնակչության և բազմահազար ուխտավորների համար, ովքեր ամեն դարի ժամանում են այս վեղ՝ խոնարհվելու իրենց սրբություններին: Բացի այդ, կարևոր է, որ հայկական թաղամասը լինի միասնական և անբաժանելի, որպեսզի պահպանվեն հողագերերի և քաղաքի բնակիչների իրավունքները: Սակայն վերջին իրադարձությունները վկայում են հակառակի մասին:

Գլուխ 3.

Հայկական դատմամշակութային ժառանգության իրավական կարգավիճակը Հնդկաստանում

Ավելի քան մեկ միջիարդ բնակչություն ունեցող Հնդկաստանում հայկական գաղութից, թերևս, պահպանվել են հնադարյան մի քանի եկեղեցիներ, գերեզմանոցներ: Երկրում ապրում են շուրջ երկու հարյուր հայեր: Ահա այն ամենը, ինչ մնացել է երբեմնի հզոր հայկական գաղութից: Մի երկիր, ավելի քան մեկ միջիարդ բնակչությամբ, որը, սակայն, հայ ժողովրդի ժառանգությունը դեռևս կենդանի է և ուժեղ:

Հայերի կապը Հնդկաստանի հետ եղել է ավելի վաղ, քան հնդկահայ գաղութի սփեղծումը: Պարմությունից հայտնի է, որ հայերը Հնդկաստանի հետ հարաբերել են Իրանի և Աֆղանստանի միջոցով և իրենց ներդրումն են ունեցել Հնդկաստանի կյանքի գրարքեր ոլորդներում ավելի վաղ, մինչև հայկական գաղութի սփեղծումը: Այն, թերևս, ճիշդ կիխնի անվանել մադրասյան շրջան, որովհետու Մադրաս քաղաքը դարձավ հնդկահայության կենտրոնը:

Մեր ազգակիցներն այդ երկիր են մուզք գործել հիմնականում Իրանից, զյուհավորապես՝ Նոր Ջուղա քաղաքից, որը բռնազարդվել և բնակություն էին հասպարել Շահ Աքասի օրոք, եթե 1604 թվականին պետական արվեցին Շին Ջուղայից և Պարսկաստանի խորքերը քշվեցին¹:

Շափ շուրջով նրանք սկսում են աչքի ընկնել զանազան ասպարեզներում: Սկզբնական շրջանում սկսեցին դպրոցներ կառուցել, հիմնել եկեղեցիներ, գրքեր տպագրել, ինչպես նաև թերթեր հրատարակել:

¹ Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1500-1800 թթ.). Եր., Երևանի համալսարանի հրատարակություն, 1971:

Հետրագայում հայերը լայն մասնակցություն ունեցան Հնդկաստանի փնտեսական կյանքի շաբաթություն:

Հայերի մեջ եղել են նշանավոր քաղաքական ու մշակութային գործիչներ, զինվորականներ, ովքեր, այդ երկրի խւական, ճշմարիք հպատակները լինելով, բնականաբար, չին կարող անմասն մնալ նաև բրիգանական գաղութարարների դեմ հնդիկ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարից: Հայերն իրենց անուրանալի ավանդը ունեցան այդ հարցում: Մի շարք հայ զորավարներ գլխավորեցին անզիւացիների դեմ մղած հնդիկների պայքարը, ինչպես, օրինակ, Գորգին Խանը²:

Հնդկաստանի հայերը սեր էին վայելում հնդիկների շրջանում, քանի որ ազնիվ ճանապարհով էին հարստացել: Նրանք բրիգանացիների դեմ մղած պայքարի շրջանում, նույնիսկ, իրենց առևտրական նավերը հարմարեցրել են ռազմական նախարակների և պայքարին մասնակցել նավագործմիղով, անզամ որոշ հաջողություններ ունեցել: Բայց բրիգանացիները, Հնդկաստանի անսահման հարստությանը փիրանալու համար, կենդրունացրել են ռազմական այնպիսի ուժեր, որոնց հնդիկները չեն կարողացել դիմադրել և գաղութացվել են:

Հայկական առաջին գաղութը սպեղծվեց Աքքարի մայրաքաղաք Ազրայում: Դրանից հետո հայկական համայնքներ առաջացան Հնդկաստանի քարբեր կենդրուններում՝ Սուրաթում, Լահորում, Դելիում, Հայդարաբադում, Բոմբեյում, Մադրասում, Կալկաթայում, Սահիդարադում, Չինապուրում, Դաքայում և այլ վայրերում³:

Հայերը կարողացան ուժեղ դիրք ձեռք բերել հավկապես երկու քաղաքում՝ Մադրասում և Կալկաթայում: Խոկ ամենից նշանավորը՝ իր անցյալով, եղավ Մադրասը: Նրա պագմությունը հայ ժողովրդի գործության կարևոր էջերից մեկը դարձավ⁴:

² <http://www.hayzinvor.am/8253.html>

³ The Emergence of the Armenian Diaspora and Genesis of the Indo-Armenian Community by Armen Baibourtian DIASPORA STUDIES Volume 2, Number1, New Delhi, January-June 2009.

⁴ Ascending, Bilateral RelationsA Critical Analysis of Interaction between Armenia and India, Armenian Review Volume 52 • Number 3-4 (Fall–Winter 2011)

1712 թ. Մադրասում կառուցվում է հայոց առաջին եկեղեցին, սակայն անգլիացիները այն քանդել են: Քաղաքի ներկայիս եկեղեցին հիմնադրվել է 1772 թվականին:

Հարավային Հնդկասպանի Մադրաս քաղաքում Նոր Զուղայի հայերը կարողացան պահպանել իրենց ազգային ինքնությունը: 18-րդ դարի հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պարմության մեջ այդ գաղութն իր պարփառ դրեն է գրավում: Նայ ժողովրդի այդ փոքրիկ հարվածի ինքնուրույնության պահպանումը համարվում է ժողովուրդների պարմության ուշագրավ երևոյթներից մեկը: Նրանք կարողացան պահպանել հայ ժողովրդի լեզուն, գիրը, գրականությունը, մշակույթը և կրոնը:

Մադրասահայերն զբաղվել են գրական, կրթական և ազգային մշակույթի այլ հարցերով: Վյագրեղ նրանք սփեղծել էին գրաքանակ, հրապարակել գրքեր և հենց այսպես է լույս դրես հայ առաջին պարբերականը՝ «Ազդարարը»⁵:

Ենթադրենք Մադրասի գաղութն աստիճանաբար սկսում է թուանալ: Նրանց մի մասը դեղափոխվում է Հնդկացին և Ինդոնեզիա, բնակություն հասպարում Ռանգուն (Բիրմա), Բարավիհա և Սուրաբայա (Ինդոնեզիա) քաղաքներում:

Մադրասի գաղութում 1915 թվականին ապրում էր ընդամենը 5 ընդունակիք՝ 36 անձ: 1961 թվականի գրվաներով Մադրասում մնացել էր հինգ հայ: Եկեղեցին սպասարկում են միայն մի քահանա և մի ժամեց: Այն էլ այն բանի համար, որպեսզի չըրկվեն եկեղեցուն պարկանող ունեցվածքի եկամուտից: Մադրասում, բացի կալվածքներից, եկեղեցին ունի ավելի քան 300000 հնդկական ոուփիին համարժեք դրամ: Այդ գումարը կարելի է փոխանցել Հնդկասպանի գործեր քաղաքներ, բայց այդ ուղղությամբ ոչինչ չի ձեռնարկվում:

Հարկ է նշել, որ Հնդկասպանի օրենքով եկեղեցուն պարկանող կալվածքը և ունեցվածքը պահպանվում են այն դեպքում, եթե այն

⁵ Ascending Bilateral Relations: A Critical Analysis of Interaction between Armenia and India Armen Baibourtian pp.65-66.

գործում է: Իսկ մեկ քահանայի և ժամկրչի գոյությունը հիմք է ծառայում ասելու, որ Մադրասի հայկական եկեղեցին գործում է: Եկեղեցին գրնվում է նոյն թաղում, որը դեռ կրում է «Հայկական փողոց» անունը: Բացի ս. Ասրվածածնի եկեղեցոց, Մադրասի հայկական հիշապահարաններից առավել նշանավորներն են Պետրոս Ռոկանի կամուրջը՝ Մայլաբորիխում, Թովմասի մայր եկեղեցին՝ Մադրասից ոչ հեռու և Թովմաս լեռան վրա (Մադրասի մոտ) եղած հուշարձանները:

Մադրասի հայ գաղութի պատմության մեջ անմահ է մնում նաև Սամվել Մուրադի (Մուրադյանի) անունը: Նա կրթական նպագրակների համար մի պատկառելի գումար է դրամադրել Վենետիկի Միխիարյան Միաբանությանը⁶ Եվրոպայում հայկական դպրոց հիմնելու և հայ պատրանիներին կրթություն բալու նպագրակով: Միխիարյան միաբանությունն այդ գումարով 1834 թվականին մի վարժարան հիմնեց Փաստայայում (Պաղուա), որը հետագայում Փարիզ գեղագիտիվեց և ապա՝ Վենետիկ: Ս. Մուրադի ազգակից Էրվարդ Ռաֆայելյանը նույնպես բացեց մի վարժարան (Փարիզում): Ներազայում այդ երկու կրթական հասպարությունները միացվեցին և սպեղծվեց Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը Վենետիկում: Մադրասի հայերը Նոր Զուղայում նույնպես հիմնեցին ճեմարան, որը կրում է Ամենափրկիչ անունը:

«Նդկահայության ազգապահպան ու մքավոր մշակույթի ոսկրանը՝ Մադրասը, կամաց-կամաց սկսում էր իր գեղղը զիջել Կալկաթային: Նորջուլայեցիները, ովքեր միշտ խրացրել են հնդկահայության շարքերը, հայացքներն ուղղում են դեպի Կալկաթա, այսպիսով աշխարհի վիթխարի քաղաքներից մեկը նույնպես դարձնելով հնդկահայության ազգային և մտավոր կյանքի պահպանման կենտրոն:»

Բենգալիայում, որի մայրաքաղաքն է ներկայումս Կալկաթան, հայերն ապրել են դեռ այդ քաղաքի հիմնադրումից առաջ: Որոշ գեղեկությունների համաձայն՝ հայերը Բենգալիայում հասպարվել

⁶ <http://www.mskh.am/am/aboutus>

Են 1646⁷ թվականին: Նրանց սկզբնական գաղութը եղել է Սահմարադրում, որը գգնվում է Կալկաթայից մոտ 200 կիլոմետր հյուսիս: Ժամանակի ընթացքում, երբ հիմնվում է Կալկաթան, հայերն ասպիճանաբար վերաբնակվում են այնքեղ, և Սահմարադի հայ գաղութը դադարում է գոյություն ունենալուց: Կալկաթայի հայ գաղութի խկական պարմությունը սկսվում է 1707 թվականից, այսինքն՝ քաղաքի հիմնադրումից գրասնյոթ տարի անց, երբ ոչ միայն Սահմարադից, այլև Կալկաթայից հիսուն կիլոմետր հեռու գրնվող Չիքրայից հայերն ասպիճանաբար դեղափոխվում են Կալկաթա, որը միաժամանակ կառուցում են հայկական և Նազարեթ⁸ Եկեղեցին: Այս քարաշեն Եկեղեցին կանգուն է և այսօր: 1957 թվականին մեծ շուրջ գրոնվեց նրա հիմնադրման 250 ամյակը: Տոնակարարությանը ներկա էր նաև Բենգալիայի կառավարիչ, օրիորդ Փարմաջա Նյուոն:

1821 թվականին Կալկաթայում⁹ հիմնվում է առաջին ճեմարանը, որը, ինեաւ, գործում է մինչ այսօր, արդեն հարյուր քառասունմեկ տարի: Ճեմարանը կրում էր «Հայոց մարդասիրական ճեմարան» անվանումը: Այն քազմաշենք կառույց է: Ինչպես հայտնի է, ճեմարանը սկզբից ի վեր ծառայել է հնդկահայերի մեջ հայոց լեզվի, գրականության և, ընդհանրապես, ազգային մշակույթի պահպանմանը: Այս դասավանդել են այնպիսի նշանավոր հայ մարդուականներ, ինչպիսիք են՝ Ռ. Աղանուրյանը, Ռ. Ավդալյանը, Մ. Թաղիարյանը և ուրիշներ:

Նախկինում ճեմարանը ղեկավարում էր Եկեղեցական Վարչությունը: Անհասկանալի հանգամանքներում հայոց սեփականություն հանդիսացող, Վրևմբյան Բենգալիայի Եկեղեցիները և ճեմարանը չնշին գումարներով վաճառվել են, իսկ հետքաջայում ճեմարանի գրարածքում գրնվող որոշ շենքեր վարձակալության սկզբունքով ան-

⁷ History of the Armenians in India, By Mesrobb J. Seth, pg. 34.

⁸ Armenian Apostolic Church of St. Gregory the Illuminator Singapore, <http://armeniansinaysia.org/2010/07/03/394/>

⁹ Armenian College (Kolkata), http://www.triposo.com/poi/W_111509193

ժամկետ հանձնվել են ինչ-որ անհագների: Ա. Զոնի կառավարման շրջանում ճեմարանը լիովին կորցրել էր հեղինակությունը:

1998 թ. ճեմարանի անմիջական վերահսկողության պարասխանագլուխությունն իր վրա վերցրեց Ամենայն Հայոց կաթողիկոսությունը: Ավելի ուշ, Գարեգին Բ-ի որոշմամբ, իր հակամանկավարժական գործունեության և կրթօջախի զարգացմանն ուղղակի խոչընդունող, Եկեղեցական վարչության ափենապետ Սոնյա Զոնը հեռացվեց պաշտոնից: Շուրով պարզ դարձավ, որ Սոնյա Զոնի օրոք կարարվել են բազմաթիվ անօրինականություններ:

Այսօր ճեմարանը գրնվում է Մայր Աթոռի խնամակալության և հոգածության ներքո: Այդ պահից սկսվում է ճեմարանի պարմության արդի, անշեղ զարգացման շրջանը:

Այսօր, եթե ճեմարանը գրնվում է Մայր Աթոռի հովանու ներքո, փորձ է արփում նրա հեղինակության վերականգնման համար: Նորանշանակ կառավարիչ, հնդկահայ հոգևոր հովիվ Խորեն արեղա Շովիաննիսյանը չափազանց կարևորում է կրթության որակի բարձրացումը, իսկ նման խնդիր, անշուշտ, կա:

Ոչ միայն Սահիդարադի հայ զաղութի պարմությունն է կապված Կալկաթայի հետ, այլև՝ Չիչրայի: Մինչև այսօր այդ քաղաքում պահպանված են հայ զաղութի հուշարձանները:

Չիչրանը հայերի համար եղել է առևսորդի քաղաք: Սակայն ժամանակի ընթացքում թուլացել է և կորցրել է իր դիրքը, զիջելով Կալկաթային: Այժմ այն զավառական քաղաք է, որտեղ չկա հայկական զաղութ, սակայն կա Եկեղեցի և պահպանված են որոշ հնություններ: 1697 թ. Չիչրան քաղաքում հիմնադրվել է հայոց սուրբ Շովիաննես Եկեղեցին¹⁰, որը համարվում է Բենգալիայի երկրորդ ամենահին քրիստոնեական տաճարը¹¹:

Կալկաթայում բնակվող հայերի ազգային Եկեղեցական իրավունքները պաշտպանելու համար սպեղծվել էր Հայկական ընկերու-

¹⁰ <http://armeniansinasia.org/2010/07/03/394/>, http://armeniancollege.in/?page_id=151

¹¹ Armenian Churches of India, http://armeniancollege.in/?page_id=151

թյուն կազմակերպությունը, որը, որոշ պայմաններից ելնելով, լուծարվել էր, սակայն, ի շնորհիվ մի խոսք հայերի, երկու գուարի առաջ կազմակերպությունը նորից սկսել է գործել:

Այժմ Կալկարայում կա գործող երկու եկեղեցի՝ ս. Գրիգոր Լուսավորիչ և ս.Նազարեթ: Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է 1910 թվականին: Այն ավելի փոքր է ս. Նազարեթ եկեղեցոց: Այս եկեղեցում արարողությունները դրեն են ունենում միայն շաբաթ օրերին¹²:

Ս. Նազարեթ եկեղեցին գոյություն ունի արդեն երկու և կես դարից ավելի: Այն գպնդում է քաղաքի կենտրոնական փողոցներից մեկում: Եկեղեցու դռան վրա փորագրված է՝ «Տայկական եկեղեցի, 1707¹³ թիվ», որը նրա կառուցման դարեթիվն է:

«Նորկասպանի քաղաքակրթությունը աշխարհում հնագույններից է, և նրա անցյալի ժառանգությունն ու մշակութային հարստությունը միշտ եղել է հետաքրքրության առարկա ողջ մարդկության համար: Հնդկասպանի նման երկիրը, օժգուած նյութական, մշակութային և գեղարվեստական արժեք ունեցող հսկայական ժառանգությամբ, գրնադարձանների և անդիկ իրերի ազգային առաքելության ուշադրության կենտրոնում: Այն մեծ կարևորություն է դալիս անդիկ իրերի ճիշտ շահագործմանը:»

